

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ» ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ Գագիկ Տեր-Հարությունյան

Հայաստանյան լրատվամիջոցներում եւ հասարակական-քաղաքական գործիչների բառապաշարում վերջերս ավելի հաճախ է օգտագործվում «տեղեկատվական հասարակություն» կամ «գիտելիքի հասարակություն» եզրը: Այս միտումը վկայում է այն մասին, որ զարգացման ներկա փուլում մեր հանրությունում վերստին ձեւավորվում է դրական վերաբերմունք տեղեկատվության եւ այդ հասկացության մաս կազմող գիտության (գիտելիքի) հանդեպ: Միեւնույն ժամանակ, վերոնշյալ հասկացությունների բովանդակային ներդրումը մեր իրականություն ենթադրում է հանրության համակարգային փոփոխություն: Այսինքն՝ «տեղեկատվական հասարակության» հիմնախնդիրը եւ դրան ուղեկցող բազմաթիվ այլ հարցեր կարիք ունեն փորձագիտական քննարկումների եւ դրանցից բխող նախագծերի իրականացման:

Սակայն այդ ամենը, թերեւս, նպատակահարմար է սկսել շրջանառվող եզրաբանությանը վերաբերող համառոտ պատմական ակնարկից:

«Տեղեկատվական հասարակություն». Այս եզրն առաջին անգամ կիրառել է Տոկիոյի Տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր Հայաշին, որը 1969թ. կառավարության պատվերով ուսումնասիրում էր այն տարիներին նոր զարգացող համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա: Ըստ Հայաշիի հետազոտության, կոմպյուտերացումը հնարավորություն է ընձեռում մարդկանց օգտվել տեղեկատվության հուսալի աղբյուրներից, ձերբազատել նրանց ամենօրյա տաղտուկ աշխատանքներից, ապահովել արտադրության ավտոմատացման բարձր մակարդակ: Ենթադրվում էր, որ այդ պարագաներում պետք է փոխվի նաեւ հենց բուն արտադրական գործընթացը. այդ գործընթացի արդյունքը՝ ապրանքը, պետք է դառնա «տեղեկատվապես ավելի ծավալուն», այսինքն՝ նրա արժեքի, գնագոյացման մեջ պետք է աճեն նորարարության, դիզայնի եւ մարքեթինգի մասնաբաժինները: Արդյունքում՝ պետք է ձեւավորվեր մի նոր հասարակություն, որը ճապոնացի պրոֆեսորն անվանեց «տեղեկատվական»: Այս մոտեցումը զարգացրեց մեկ այլ ճապոնացի՝ Մասուդան, համաձայն որի՝ «հասարակության զարգացման շարժիչ ուժն է լինելու ոչ թե նյութական, այլ տեղեկատվական աշխատանքի արդյունքի ստեղծումը»:

«Տեղեկատվական հասարակության» հայեցակարգի հիմնադիրներին բնորոշ էր որոշակի ուտոպիզմ. ըստ նրանց՝ նման հասարակությունում չէին լինելու դասակարգեր եւ հակասություններ, տիրելու էին ներդաշնակություն ու համերաշխություն, կարիք չէր լինելու պետական մեծ ապարատի եւ այլն: Միեւնույն ժամանակ, «բարձր» եւ «տեղեկատվական» տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա իրողություն էր, եւ ճապոնացիների գաղափարներն իրենց զարգացումը գտան Դանիել Բելլի 1973թ. հրատարակած «Յետինդուստրիալ հասարակության հարձակումը. սոցիալական կանխագուշակման փորձ» աշխատությունում:

«Յետինդուստրիալ հասարակություն». Ըստ Բելլի՝ մարդկային հասարակության պատմությունը կարելի է բաժանել ագրարային, ինդուստրիալ եւ հետինդուստրիալ փուլերի: Վերջինս 20-րդ դարի կեսերի սոցիալական կառուցվածքի փոփոխությունների հետեւանք է. այն որոշիչ սոցիալական ձեւ է լինելու 21-րդ դարում եւ առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, ճապոնիայում, Ռուսաստանում ու Արեւմտյան Եվրոպայում: Յետինդուստրիալ փուլի համար բնորոշ է անցումը ապրանքարտադրությունից այն ծառայությունների արտադրությանը, որոնք առնչվում են առողջապահության, կրթության, գիտական հետազոտությունների եւ կառավարման հետ: Դա իր հերթին հանգեցնելու է մտավորականության եւ պրոֆեսիոնալների խավի տեսակարար կշռի մեծացմանը հասարակությունում: Որոշումների ընդունման գործընթացի համար կարեւորագույն նշանակություն է ձեռք բերում տեսական գիտելիքների դերը, ինչը ենթադրում է տեսության առաջնությունը էմպիրիզմի նկատմամբ:

Պետք է հատկապես առանձնացնել Բելլի այն կանխատեսումը, որ «հետինդուստրիալ հասարակությունում» տնտեսության եւ այլ ոլորտների զարգացմանը վերաբերող հիմնական որոշումները պետք է ընդունվեն կառավարության կողմից, բայց դրանք պետք է հիմնավորվեն նրանց իսկ կողմից հովանավորվող գիտական հետազոտությունների, մշակումների եւ վերլուծությունների վրա: Արդեն այսօր տեխնոլոգիապես առաջատար երկրներում (մասնավորապես՝ ԱՄՆ-ում) որոշումները ներքին եւ արտաքին քաղաքականության ոլորտում մեծ չափով ընդունվում են «ուղեղային կենտրոնների» կողմից մշակված նախագծերի հիման վրա:

Չեղարկելով Դանիել Բելլի զարգացրեց իր տեսությունը եւ միավորեց «հետինդուստրիալ» ու «տեղեկատվական» հասարակություն հասկացությունները: Չամաձայն այդ մոտեցման՝ «տեղեկատվական հասարակությունը» «հետինդուստրիալ հասարակության» նոր անվանումն է, որը մեկնաբանվում է ոչ թե որպես հասարակության զարգացման հերթականություն (հետինդուստրիալ եւ հետո նոր տեղեկատվական), այլ

ընդգծում է հետինդուստրիալ հասարակության հիմնական սոցիալական առանցքը՝ տեղեկատվությունը:

Գիտական հանրությունը շարունակում է ուսումնասիրել ընթացող «տեղեկատվական պերմանենտ հեղափոխության» ամենատարաբնույթ ազդեցությունները համաշխարհային հանրության վրա: Այդ համատեքստում, Հայաշիի եւ Բելլի որոշ տեսակետներ ներկայումս կարող են եւ պարզունակ թվալ: Սակայն մարդկության կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական գործոնի դերակատարումը միայն աճում է, եւ այդ պատճառով՝ «տեղեկատվական հասարակություն» հասկացության դասական հիմնադրույթները չեն կորցնում իրենց արդիականությունը եւ հրատապությունը:

Գիտելիք եւ քաղաքականություն. Ակնհայտ է, որ ցանկացած հասարակության կամ պետության զարգացման եւ մրցունակության մակարդակի կարելորագույն չափանիշներից են տեղեկատվական (գիտական, տեխնոլոգիական) ռեսուրսների քանակը եւ որակը, ինչպես նաեւ դրանք գործնականում կիրառելու կազմակերպչական ունակությունը: Այս վերջինը խիստ կարեւոր է, եւ այդ իսկ պատճառով կազմակերպչական ռեսուրսները հաճախ ներկայացվում են որպես տեղեկատվական ռեսուրսների բաղադրամաս: Ակնհայտ է նաեւ, որ հիշատակված գործոնները չէին կարող զերծ մնալ քաղաքականացումից: Հատկանշական է, որ ամերիկյան ազգային անվտանգության համակարգի հեղինակավոր ներկայացուցիչներից մեկը՝ գեներալ Վաշինգտոն Պլետը, ռազմավարական հետախուզության ամենազլխավոր նպատակն էր համարում հակառակորդի գիտական ներուժի եւ գիտելիք կրողների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերումը: Նման հայեցակարգային մոտեցումներ ունեցող ամերիկյան ընտրանին, բնականաբար, առանձնահատուկ հոգատարություն է ցուցաբերում սեփական մտավոր ռեսուրսների հանդեպ եւ նույնքան ուշադիր է իր մրցակիցների նմանատիպ ռեսուրսների նկատմամբ: Մասնավորապես, ամերիկացիների հաղթանակը սառը պատերազմում որոշակիորեն պայմանավորված էր գիտելիքների ոլորտում «սովետների» հանդեպ նրանց ունեցած առավելությամբ, որն արտահայտվում էր հատկապես հումանիտար գիտությունների բնագավառում եւ բնագիտության հիմնարար արդյունքները գործնականում կիրառելու կարողությամբ:

Համաձայն մի շարք հետազոտողների՝ սառը պատերազմին հաջորդող շրջանում ԱՄՆ-ի զլխավոր մտահոգություններից էր խորհրդային բավական հզոր գիտական համակարգի կազմալուծումը: Պետք է ընդունել, որ իրենց առջեւ դրված այդ ծրագիրը¹ ամերիկացիները հաջողությամբ իրագործեցին, եւ եթե Ռուսաստանը (այժմ նրան է հետեւում նաեւ

Ղազախստանը) իր ունեցած հսկայական ռեսուրսների միջոցով փորձում է շտկել ստեղծված անմխիթար իրավիճակը, ապա նույնը չի կարելի ասել այլ հետխորհրդային հանրապետությունների, այդ թվում՝ ՀՀ-ի մասին²:

ՀՀ գիտակրթական ոլորտի վերաբերյալ. Հայտնի է, որ խորհրդային գիտատեխնիկական համակարգում Հայաստանն առաջավոր դիրք էր գրավում: Պետք է ընդունել, որ մեր հասարակությունն այն ժամանակ անհամեմատ ավելի մեծ հիմքեր ուներ «տեղեկատվական» կոչվելու, քան այսօր: Ամրագրենք նաեւ, որ մեկնարկային հավասար պայմանների դեպքում գիտակրթական ոլորտում Հայաստանի առավելությունը խորհրդային այլ հանրապետությունների նկատմամբ բացառապես պայմանավորված էր գիտելիքի նկատմամբ ունեցած մեր ավանդական մոտեցումներով եւ, առհասարակ, ազգային յուրահատկությամբ: Այս վերջին հանգամանքները խիստ կարեւոր են եւ այսօր գրավական են այն բանի, որ ապագայում ՀՀ-ում կարող է եւ վերականգնվել «գիտելիքի հասարակությունը», որին հասնելուն խոչընդոտում են մի շարք օբյեկտիվ եւ սուբյեկտիվ բնույթի գործոններ:

Մասնավորապես, ընդունված է համարել, որ այն երկրներում, որտեղ մեկ շնչին ընկնող տարեկան եկամուտները ցածր են \$20 000-ից (իսկ ՀՀ-ում նման եկամուտները կազմում են 3000 - 6000\$³), դժվար է խոսել «տեղեկատվական հասարակության» մասին, եւ սա օբյեկտիվ իրողություն է: Միեւնույն ժամանակ ակնհայտ է, որ նյութական ռեսուրսներով ոչ այնքան հարուստ ՀՀ-ում արագացված զարգացումը եւ տնտեսական անհրաժեշտ մակարդակին հասնելը հնարավոր է միայն «տեղեկատվական հասարակությանը» բնորոշ տեխնոլոգիաների միջոցով: Նման, կարծես թե փակուղային, իրավիճակում պահանջվում են ոչ ստանդարտ կազմակերպչական մոտեցումներ եւ, թերեւս, այնպիսի «ուղեղային կենտրոններ», որտեղ կարող են հղանալ այդ ոչ ստանդարտ գաղափարները եւ համապատասխան նախագծերը:

Միեւնույն ժամանակ, մինչ հայեցակարգային որոշումների ընդունումը պետք է ձգտել նվազագույնը չվատթարացնել գիտելիքների ոլորտում տիրող անմխիթար իրավիճակը: Օրինակ, ներկայումս բավական մեծ կազմակերպչական (թերեւս, նաեւ նյութական) միջոցներ են ծախսվում գիտության այսպես կոչված «կոմերցիալացման» ուղղությամբ: Սակայն նման գործընթացը պահանջում է զարգացած գիտաարտադրական ենթակառուցվածք, ինչն այսօր բացակայում է: Գիտական մեներջմենթի տեսությունից հայտնի է նաեւ, որ եթե հիմնարար հետազոտությունը պահանջում է պայմանական 1 միավոր նյութական ծախսեր, ապա դրա արդյունքների հիման վրա պիլոտային տեխնոլոգիայի ստեղծումը

պահանջում է 10 միավոր, իսկ կոմերցիալ ներդրումը՝ արդեն 100 միավոր նյութական ծախսեր: Ակնհայտ է, որ այսօր ՀՀ-ում նման գործունեության նախապայմաններ չկան, եւ հիմնարար ոլորտում դեռեւս գործող գիտական հիմնարկներից «կիրառական բնույթի առաջարկությունների» հավաքումը նվազագույնը արհեստական եւ իմիտացիոն բնույթ է կրում:

Նկատենք, որ նման ոչ արդյունավետ միջոցառումները գիտական ոլորտում եզակի չեն, մինչդեռ զարգացումների այս փուլում, թերեւս, նպատակահարմար է կայունացնել իրավիճակը եւ փորձել պահպանել գիտելիք կրողների խիստ նոսրացած հանրությունը, առանց որոնց դժվար է պատկերացնել որեւէ թռիչքային անցում:

Հայաստանում «տեղեկատվական/գիտելիքի հասարակության» ձեւավորման ձգտումը ավելի քան հրատապ է եւ այլընտրանք չունի. զարգացման այլ սցենարներն ակնհայտորեն փակուղային են: Միեւնույն ժամանակ, այդ ձգտումը պետք է մարմնավորվի տարաբնույթ նախագծերի ստեղծմամբ, որոնց մշակման համար անհրաժեշտ է ներգրավել Հայության ողջ ստեղծագործական ներուժը:

¹ «Կոնսպիրոլոգիական» հակումներ ունեցող փորձագետները տալիս են անզամ այդ ծրագրի անվանումը՝ «Արծաթե բանալի» (*Silver Key*):

² Գիտական համակարգի կազմալուծումից խուսափեցին Բելառուսը եւ բալթյան հանրապետությունները: Վերջիններս դիտարկվում են որպես Ռուսաստանի դեմ Արեւմուտքի դաշնակից, իսկ Բելառուսի պարագայում որոշիչ նշանակություն ունեցավ նախագահ Լուկաշենկոյի վարած խիստ պահպանողական եւ, միեւնույն ժամանակ, ճկուն քաղաքականությունը:

³ Թվերի նման տարբերությունը պայմանավորված է տարբեր կազմակերպությունների կողմից կիրառվող հաշվարկային մեթոդների տարբերությամբ:

ԱՂԻՔԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ Սուրեն Մովսիսյան

Այսօր Աղրբեջանը վարում է լայնածավալ, լրջորեն նախապատրաստված տեղեկատվական պատերազմ Հայաստանի դեմ, որը պակաս վտանգավոր չէ, քան ռազմական գործողությունները: Ստորեւ կփորձենք ներկայացնել աղրբեջանական լրատվամիջոցներում առկա տեղեկատվական գործողությունները, որոնք մեր կողմից դասակարգվել են ըստ հետեւյալ հիմնական ուղղությունների.

1. «Առաջնայնության գործոն». Այս սկզբունքի նախահայր կարելի է համարել նացիստական Գերմանիայի ակնառու դեմքերից մեկին՝ դոկտոր Գեբելսին: «Այն մարդը, ով կասի աշխարհին առաջին բառը, միշտ ճիշտ է», ասում էր նա: Նույն եզրակացության են եկել մի շարք գիտնականներ, այդ թվում նաեւ Կ.Յովվանդը, Ն.Ջանիսը, Լ.Դոուբը եւ այլք: Քարոզչի հաջողությունն ապահովված է, եթե իր տեղեկատվությունն ավելի շուտ է հասել հասարակությանը, քան նրա հակառակորդին, համոզված են նրանք: Դա հիմնավորվում է նրանով, որ մարդիկ գերադասում են հավատալ սկզբնական տեղեկատվությանը եւ փոխել արդեն ստեղծված կարծիքն այս կամ այլ հարցի վերաբերյալ՝ շատ դժվար է: Հիտլերը պնդում էր, որ հասարակությունը հակված է հավատալու նույնիսկ 90% չապացուցված մեղադրանքին, քան դրա հերքմանը, եթե վերջինս նույնիսկ հիմնավորված է 100%-ով: Աղրբեջանական լրատվամիջոցները, կիրառելով այս սկզբունքը, փորձում են այն օգտագործել՝ ընդհանուր հասարակական կարծիքը փոխելու նպատակով:

Ուշագրավ են աղրբեջանական մամուլում զինադադարի խախտման դեպքերի մասին հայտարարությունները, որոնք սկսել են կրել ամենօրյա բնույթ: Եթե հետեւենք այդ հաղորդագրություններին, ապա անցյալ տարի գրեթե ամեն օր հայկական կողմը խախտում էր զինադադարը մեկ կամ երկու ուղղություններով: Անցյալ տարվա վերջից խախտումների մասշտաբն աստիճանաբար մեծացավ. այսօր հայկական կողմը խախտում է զինադադարն ամեն օր արդեն 4-5 ուղղություններով: Այս կեղծ հաղորդագրությունները համաշխարհային հասարակության կողմից ընդունվում են որպես իրական, ինչի ապացույցն է Եվրախորհրդի, ԵԱՀԿ,

Եվրամիության, ԱՄՆ բարձրաստիճան ղեկավարության մտահոգությունը զինադադարի խախտման հաճախականության առիթով: Այսինքն՝ կեղծ քարոզչությունը միանշանակ օգուտ է բերում է Ադրբեյջանին՝ հավաստելով նրա «խաղաղասեր էությունը» եւ հավատարմությունը խաղաղության պահպանման պարտավորությանը:

Մինչդեռ հայկական կողմը, եռամսյակը մեկ հայտարարելով «հարեւանների» կողմից զինադադարի խախտման վերաբերյալ, ինչպես նաեւ հազվադեպ արձագանքելով կեղծ զինադադարի խախտման հայտարարություններին, ձեռք է բերում «զինադադարը խախտողի» կարգավիճակ, ինչն իր հերթին բացասաբար է անդրադառնում Յայաստանի միջազգային վարկանիշի եւ Ղարաբաղի հիմնախնդրի վրա: Եթե դրան գումարենք տարբեր միջազգային կազմակերպություններում ադրբեյջանական կողմի ակտիվությունը, որի արդյունքն է նաեւ վերջերս ընդունված ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի A/62/L.42 որոշումը, որտեղ պետությունները (37 կողմ, 7 դեմ եւ 150 ձեռնպահ) ցույց տվեցին իրենց վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, ապա ակնհայտորեն տեսնում ենք նման քարոզչության արդյունքները:

2. «Փոխհղումային եւ անանուն հղումային համակարգ». Ընդունված է, որ արդյունավետ տեղեկատվական ազդեցությունն իրականացվում է հասարակության մեջ հեղինակություն վայելող մարդկանց կամ հաստատությունների միջոցով: Միաժամանակ, ավելի համոզիչ լինելու համար օգտագործվում են փաստաթղթերի մեկնաբանություններ, մասնագետների գնահատականներ կամ այլ հաշվետվություններ: Օրինակ, 2008թ. մարտի 28-ին Day.az տեղեկատվական գործակալությունը հայտնեց, որ մի խումբ հայեր, որոնց ինքնությունը չի հաջողվել պարզել, ավազակային հարձակում են գործել Բենիլյուքսի՝ Ռոտերդամում գտնվող Ադրբեյջանական կոնգրեսի գրասենյակի վրա: Ոստիկանությունը եւ վկաները հաստատել են, որ այդ հարձակումը կատարվել է հայերի կողմից: Այս գործակալությունը հիմք է ընդունել մեկ այլ ադրբեյջանական գործակալության (ANS) հաղորդագրությունը, որտեղ, արդեն առանց որեւէ հղման, ներկայացվել էր կատարվածը: Այդպես էլ տեղեկատվության աղբյուրը չի պարզվել, իսկ լրագրողները ոչ մի պատասխանատվություն չեն կրել կեղծ տեղեկատվություն տարածելու համար: 2008թ. հունվարի 28-ին նույն Day.az գործակալությունը հայտարարել էր, թե իբր Ուկրաինայի Լվով քաղաքի հայկական համայնքն առաջարկել է անվանափոխել քաղաքն «Առյուծ»-ով՝ ի հիշատակ Լվով քաղաքի հայ հիմնադիրների: Գործակալությունը հիմք էր ընդունել մեկ այլ ադրբեյջանական

գործակալության (APA) հայտարարությունը, որն ընդհանրապես չէր հիմնավորել այդ տեղեկությունը:

3. «Միջնորդներ» կամ «հայտնի մասնագետներ». Հայտնի է, որ ոչ պաշտոնական տեղեկությունները՝ լուրերը, տարբեր ոլորտների մասնագետների գնահատականները, կրոնական առաջնորդների կարծիքները, ավելի նշանակալի են, քան այս կամ այն պետական կառույցի պաշտոնական տեղեկությունները: Այս միջոցով ցանկացած պետական դիրքորոշում հնարավոր է հասցնել հասարակությանը՝ ցանկալի արդյունքի հասնելու նպատակով: Ադրբեջանական լրատվամիջոցները հաջողությամբ օգտագործում են այս գործոնը: Ներկայացնենք մի քանի օրինակներ: Ադրբեջանական մամուլում, հատկապես Day.az գործակալության ներկայացրած հարցազրույցները, վերցվում են միայն «հայտնի» մասնագետներից: Այս սկզբունքը մեծ դեր է խաղում հասարակական կարծիք ստեղծելու գործում: Այսպես. 2006թ. մարտի 14-ին մի անհայտ ադրբեջանցի «քաղաքագետ»՝ Վուգար Սեիդով, հայտնվեց ադրբեջանական մամուլում իր «պատմաքաղաքական վերլուծական» հոդվածով: Մի քանի ամիս անց նույն անձը արդեն ներկայացվում է որպես «հայտնի քաղաքագետ Հունգարիայից»: Մասնագետների շարքում է նաև հանրաճանաչ Վաֆա Գուլուզադեն, որը ժամանակ առ ժամանակ հայտնվում է մամուլում ինչ-որ կարեւոր մեկնաբանություններով: Ադրբեջանցի «հայտնի» քաղաքագետների շարքը կարելի է շարունակել անվերջ, քանի որ ներկայացված գործոնը մեծ նշանակություն ունի տեղեկատվական պատերազմ վարելու ոլորտում:

4. «Հասկացությունների աղավաղում եւ դասակարգում». Ըստ հոգեբան Գ.Օլպորտի, յուրաքանչյուր լեզվի էությունն այն անվերջ տեղեկատվական հոսքի դասակարգման եւ բաշխման մեջ է, որին մենք ամեն վայրկյան հանդիպում ենք: Երբ ինչ-որ առարկա ենք նկարագրում, մենք ընդգծում ենք դրա յուրահատկությունը՝ հաճախ ուշադրություն չդարձնելով թե ինչպես է այն ներկայացվում կամ դասակարգվում, որոնք ուղղորդում են մեր մտքերը եւ զգացմունքային ընկալումը: Նման ներկայացման կամ դասակարգման արդյունքում՝ առարկաները կամ դեպքերն այնպես են ձեւավորվում, որ քաղաքացին ընդունում է այդ քարոզչական իրավիճակի պարտադրված նկարագրումը: Այն ընդգրկում է հատուկ արտահայտություններ յուրաքանչյուր տեղեկատվական հաղորդման համար: Դրանք բառեր եւ բառակապակցություններ են սեփական՝ «դրական» եւ «կառուցողական» դիրքորոշումը ներկայացնելու համար:

Դրանք նաև տարբերակող բառեր են՝ թշնամուն բացասական ներկայացնելու համար:

Ադրբեջանական Day.az, ANS, Trend եւ «Зеркало» գործակալությունները, ցանկանալով բարձրացնել իրենց զինված ուժերի ոգին, Հայաստանի բանակը ներկայացնում են որպես «Հայկական զինված ստորաբաժանումներ»՝ իրենց ստորաբաժանումներն անվանելով «Ադրբեջանի ազգային բանակ»: Անընդհատ մատնանշվում է Ադրբեջանի «կողմ» լինելը Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանը եւ այս հարցում Հայաստանի «ոչ կառուցողական դիրքորոշումը»: Բազմաթիվ են տնտեսական «աննախադեպ աճի» կամ այլ հաջողությունների վերաբերյալ համեմատությունները Հայաստանի նվաճումների հետ, որոնցում յուրաքանչյուր հնարավորություն օգտագործվում է՝ ցուցադրելու Ադրբեջանի «առավելությունը»:

5. «Կարծրատիպերի օգտագործում». Մարդկանց մեծ մասը մտածում է կարծրատիպերով, օրինակ՝ «Ծուխն առանց կրակի չի լինում» կամ «Եթե այդ բանի մասին խոսում են, ուրեմն ինչ-որ բան կա» եւ այլն: Արդյունքում՝ այլ կերպ մտածող մարդկանց մեջ փոքրամասնություն լինելու մտայնություն է առաջանում: Նման քարոզչությունը հիմնականում կատարվում է սոցիոլոգիական հետազոտությունների կամ հեղինակավոր անձանց օժանդակությամբ, ինչը նվազեցնում է ընկալման քննադատությունը, քանի որ մարդիկ դժվար են ըմբռնում մատուցված տեղեկատվության միտումնավոր լինելը: Օրինակ, 2005թ. նոյեմբերի 3-ին Day.az կայքում տեղադրվեց հասարակական մի «հետազոտություն», որն իբրև թե կատարել էր ադրբեջանական, այսպես կոչված, «Ղարաբաղի ազատագրման կազմակերպությունը»: «Հետազոտության» իմաստը ադրբեջանական հասարակության մեջ Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման իրենց տեսակետի արմատավորումն է:

6. «Հետադարձ կապ». Այս գործոնին վերաբերող միջոցառումների առանձնահատկություններից են բարձրաստիճան անձանց մտերմիկ զրույցները փողոցներում, այցերը շրջաններ, ուղիղ կապի միջոցով հասարակության եւ լրատվամիջոցների հետ հաղորդակցվելը: Հաճախ նման շփումները կազմակերպված թատրոնի բնույթ են կրում: Հայտնի է, օրինակ, որ Ֆրանսիայի նախագահ դը Գոլը երբեւէ հարց չի ստացել, որին նախօրոք պատրաստված չի եղել: Իսկ ի՞նչ է կատարվում Ադրբեջանում: Ադրբեջանական մամուլը լուսաբանում է իր առաջնորդի բազմաթիվ այցերը շրջաններ, որտեղ հիմնական հարցերը եւ պատասխանները

Կենտրոնացած են ադրբեջանական ռազմական հաջողությունների եւ ռազմական ուղիով տարածքների «ազատագրման» վրա: Նույն ոգով են աշխատում խորհրդարանի ներկայացուցիչները՝ տարբեր երկրներում հակահայկական քարոզչություն տանելով: Այսպիսով, խաղարկվում է տեղեկատվական պատերազմի այս գործոնը, ցույց է տրվում նախագահի եւ այլ բարձրաստիճան այրերի մտահոգությունը հասարակության, հատկապես հեռավոր շրջանների բնակիչների նկատմամբ, պատրաստակամությունը՝ տարածքներն ամեն գնով վերադարձնելու գործում: Դրա վառ օրինակ է Ադրբեջանի նախագահի վերջերս կատարած այցը հարավարեւմտյան շրջաններ: ANS գործակալության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ նախագահն այցելել էր այդ շրջան բժշկական կենտրոնի եւ ՋԷԿ-ի բացման արարողությանը մասնակցելու նպատակով: Սակայն ներկայացվածն ամբողջությամբ վերաբերում է Չայաստանի կողմից «գրավված տարածքներին», դրանց ազատագրման առաջնայնությանը, ինչպես նաեւ դրա արդյունքում հազարավոր փախստականների առկայության հարցերին:

Երկրի ներսում տարվող քարոզչական աշխատանքի բնույթից չեն տարբերվում նաեւ միջազգային կազմակերպություններում ադրբեջանական ներկայացուցիչների կամ այլ երկրներ այցելություններին պետական այրերի հայտարարությունները: Օրինակ՝ Trend News գործակալությունը հարցազրույց էր վերցրել Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովից՝ Լատվիա կատարած այցի ժամանակ: Սակայն այդ այցի վերաբերյալ մանրամասներին տեղեկացնելու փոխարեն՝ լրագրողն անդրադառնում է Չայաստանի ԱԳ նախարարի հետ հնարավոր հանդիպմանը եւ իր ակնկալիքներին: Արդյունքում, հողվածում նշվում է Չայաստանի «ոչ կառուցողական» դիրքի, միջազգային հանրության դիրքորոշման եւ Ղարաբաղի հիմնահարցում Ադրբեջանի անզիջողության մասին: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հարեւան երկրի բարձրաստիճան այրերի այցերը եւ, ընդհանրապես, նրանց հետադարձ կապը հանրության հետ նպատակ են հետապնդում զգոն պահել ադրբեջանական հասարակությանը, մշտապես հիշեցնել նրան «Չայաստանի կողմից իրականացված» ռազմական ագրեսիայի մասին՝ զուգահեռ ապահովելով իրենց ազգանվեր աշխատանքի դիմաց ընտրություններին ակնկալվող ձայների առկայությունը:

7. «Պատմության վերագրառում». Այս գործոնն օգտագործվում է ապագա սերնդի ձեւավորման եւ ցանկալի գաղափարախոսության սերմանման նպատակով: Արհեստականորեն ձեւավորված պատմական

իրականությունը փոխանցվում է գրքերի, դասախոսությունների, ռադիոյի եւ հեռուստատեսության, թատերական ներկայացումների, գեղարվեստական ֆիլմերի միջոցով: Օգտագործելով այս ամբողջ ռեսուրսը՝ կառուցվում է վիրտուալ աշխարհ, որն ընկալվում է որպես իրական: Արդյունքում՝ մարդն իր իրական կյանքը կարող է ընդունել որպես տհաճ երազ, իսկ այն ամենը, ինչը քարոզվում է, որպես իրականություն: Պատմության վերափոխմամբ հնարավորություն է ընձեռվում ներազդել լայն զանգվածների հիշողության վրա: Այս առումով, ադրբեջանական քարոզչությունը հասել է աննախադեպ արդյունքների: Երկրի ողջ տարածքում կատարվում են պատմամշակութային հետազոտություններ, հայտնագործությունները վերագրվում են ադրբեջանական «հնագույն պատմությանը»: Ունեցությունների են ենթարկվում ոչ միայն հայկական հարուստ մշակույթը եւ հայոց պատմությունը, այլեւ պարսկական ու վրացական մշակույթները: Այս ամենը կատարվում է պետության օժանդակությամբ եւ ադրբեջանցի «գիտնականների» մասնակցությամբ:

Այսպիսով, տեղեկատվական պատերազմի գործոնների առկայությունն ադրբեջանական լրատվամիջոցներում հաստատում է այն փաստը, որ Ադրբեջանում տարվում է լուրջ, լայնածավալ եւ երկարաժամկետ տեղեկատվական պատերազմ ընդդեմ Հայաստանի: Մեր լրատվամիջոցները համարժեք չեն արձագանքում հակառակորդի քայլերին. միայն ժամանակ առ ժամանակ հայտնվում են ադրբեջանական այս կամ այն տեղեկատվության հերքումներ: Այնինչ, վաղուց ժամանակն է այս ուղղությամբ դիմելու կանխարգելիչ եւ նախահարձակ քայլերի:

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԴԵՄ
(Ներկա փուլի նոր միտումներ)
Ռուբեն Սաֆրաստյան**

Պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ տասնամյակներ շարունակ եղել եւ ներկայումս էլ մնում է Թուրքիայի Հանրապետության կառավարող շրջանների կարեւոր խնդիրներից մեկը՝ մաս կազմելով Հայկական հարցում պետական քաղաքականության: Սույն հոդվածում կանդրադառնանք այդ քաղաքականության ներկա փուլի ընթացքում վերջին տարիներին ի հայտ եկած մի նոր միտումի քննությանը, որը պայմանականորեն անվանել ենք «միջազգային-իրավական»:

Միջազգային-իրավական միտումը սկզբունքորեն նոր երեւոյթ է թուրքական քաղաքականության շրջանակներում: Նրա էությունը հետեւյալն է. օգտագործելով միջազգային իրավունքի հնարավորությունները՝ փորձել «ապացուցել», որ Հայոց ցեղասպանությունը չի համապատասխանում Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թվականի Կոնվենցիայով ընդունված ցեղասպանության չափորոշիչներին եւ այդպիսով՝ կասեցնել նրա միջազգային ճանաչման գործընթացը: Այս մոտեցման նորությունն այն է, որ մի կողմից՝ փորձ է արվում խնդիրը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պատմագիտական քննարկումների ու քաղաքական պայքարի հարթությունից տեղափոխել միջազգային իրավունքի հարթություն, իսկ մյուս կողմից՝ որդեգրվում է ակտիվ դիրքորոշում, որը ենթադրում է հակազդեցություն հայկական կողմի համապատասխան նախաձեռնություններին եւ «հարձակողական» գործողությունների իրականացում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական կողմը նույնպես որոշակի նախապատրաստական քայլեր է ձեռնարկում հարցը միջազգային իրավական առյաններ տեղափոխելու ուղղությամբ, վերը նշված թուրքական նոր մոտեցման առանձնահատկությունների բացահայտումը, բացի զուտ ճանաչողական հետաքրքրությունից, ունի նաեւ կարեւոր գործնական նշանակություն:

2000թ. աշնանը – 2001թ. ձմռանը Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավը, թերեւս, առաջին անգամ քննարկեց պայքարի միջազգային-իրավական մեթոդներին դիմելու հնարավորությունները: Այդ շրջանում աննախադեպ թափ էր ստացել ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, ինչի արդյունքում վտանգվել էին այդ երկրների հետ Թուրքիայի միջպետական հարաբերությունները: Այս պայմաններում էր, որ Բյուլենթ Էջեւիթի ղեկավարած կոալիցիոն կառավարությունը նախաձեռնեց «հայերի պնդումների» դեմ պայքարի միջոցների քննարկում երկրի կառավարման կարելորագույն օղակի՝ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) մի շարք նիստերում: Առաջին քննարկումը տեղի ունեցավ 2000թ. սեպտեմբերի 29-ին եւ դարձավ ԱԱԽ այդ օրվա նիստի օրակարգի առաջին հարցը: Համաձայն պաշտոնական հաղորդագրության, ԱԱԽ այդ նիստի ժամանակ «ցավով են ընդունվել այսպես կոչված Հայոց ցեղասպանության մասին պնդումների հետ առնչվող զարգացումները» եւ որոշվել է նրանց դեմ «փուլ առ փուլ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել»: Որոշ լրագրեր ճշտեցին, որ կախված դեպքերի զարգացումից՝ այդ միջոցները կարող են լինել ավելի «ներգործուն»:

Նմանատիպ խնդիրներ քննարկվեցին նաեւ ԱԱԽ 2000թ. հոկտեմբերի 27-ի եւ 2001թ. հունվարի 22-ի նիստերում: Մասնավորապես, հոկտեմբերի 27-ի նիստի ընթացքում արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը ներկայացրել է գործողությունների ծրագիր, որը ենթադրում էր դիվանագիտական, քաղաքական ու գիտական բնույթի միջոցառումների իրականացում: Համաձայն մամուլի տվյալների, քննարկվել էին նաեւ պաշտոնաթող դիվանագետ Գյունդյուզ Աքթանի երկընտրանքային բնույթի առաջարկները, որոնք պահվում էին գաղտնի: ԱԱԽ այդ նիստի որոշումների մասին ոչինչ հայտնի չէ:

Հետաքրքիր է նշել, որ հաջորդ օրը Աքթանը մամուլում հանդես եկավ հողվածով, որտեղ առաջին անգամ կոչ արեց Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարում հենվել միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թվականի Կոնվենցիայի վրա: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ նրա առաջարկները ԱԱԽ-ին կապված էին հենց պայքարի միջազգային-իրավական միջոցների հետ:

Արդեն հաջորդ տարի՝ 2001թ. նրա հեղինակությամբ լույս տեսավ «Հայկական հարցը եւ միջազգային իրավունքը» հոդվածը, որտեղ փորձ էր արվում «հիմնավորել», որ 1915թ. իրադարձությունները միջազգային իրավունքի տեսակետից չեն հանդիսանում ցեղասպանություն, քանի որ

նրանց նկատմամբ չի կարելի կիրառել Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թվականի Կոնվենցիայի ցեղասպանությունը որպես հանցագործություն որակող դրույթները: 2002թ. Աքթանը սկսեց համապատասխան հայտարարություններով հաճախակի հանդես գալ մամուլում:

Ի կատարումն ԱԱԽ որոշումների՝ 2001թ. մայիսին երկրի վարչապետի կարգադրությամբ ստեղծվեց հատուկ մարմին, որի վրա դրվեց Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի դեմ մղվող պայքարը ղեկավարելու ու համակարգելու խնդիրը: Այն անվանվեց «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ» (այսուհետ՝ Ցեղասպանության խորհուրդ-ՑԽ), որի նախագահ նշանակվեց փոխվարչապետը, իսկ կազմի մեջ ներգրավվեցին տարբեր պետական գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ: Նրանց թվում էր նաեւ Արդարադատության առաջին փոխնախարարը: ՑԽ նստավայրն է ԱԱԽ Գլխավոր քարտուղարության շենքը: Այս հանգամանքը պատահական չէ, քանի որ ՑԽ-ն գործում է ԱԱԽ Գլխավոր քարտուղարության անմիջական հսկողության ներքո եւ համաձայն թուրքական մամուլի՝ մաս կազմում նրա կառույցի: Այդ հսկողությունը պիտի իրականացվեր ԱԱԽ հատուկ ներկայացուցչի կողմից: Այդ պաշտոնում նշանակվեց Գլխավոր շտաբի գնդապետ Մյունիմ Օնգյորենը: Նա համարվում է թուրքական Զինված ուժերի «ականավոր» սպաներից մեկը, հերոս, որը նախքան այդ պարտականությունները կատարելը, մասնակցել էր Քրդական բանվորական կուսակցության ղեկավարած զինված պայքարը ճնշելու գործողություններին, իսկ հետագայում աչքի ընկել էր Հյուսիսային Իրաքում քուրդ զինյալների դեմ պայքարում:

ՑԽ նիստերը տեղի են ունենում եռամսյակը մեկ: Այն գործում է ցայսօր:

ՑԽ առաջին նիստը, ի թիվս այլ աշխատանքային խմբերի, որոշեց ստեղծել իրավական հարցերի ուսումնասիրման աշխատանքային խումբ, որի վրա դրվեց ցեղասպանության հետ առնչվող իրավական, այդ թվում նաեւ միջազգային-իրավական, խնդիրների մանրակրկիտ հետազոտման պարտականությունը: Այդ խմբի գործունեությունը ղեկավարվում էր Արդարադատության նախարարության ներկայացուցչի կողմից:

Տարիներ շարունակ ՑԽ ստեղծած աշխատանքային խմբերի գործունեությունը հիմնականում ընթանում էր փակ դռների հետեւում, ինչի պատճառով հնարավոր չէ պարզաբանել, թե իրավական բնույթի ինչ խնդիրներ էին գտնվում նրա քննարկումների կենտրոնում: 2006թ. նոյեմբերին այն ժամանակվա Արտաքին գործերի նախարար եւ փոխվարչապետ Ա.Գյուլը, որն ի պաշտոնե գլխավորում էր ՑԽ-ն, հանդես եկավ հայտարարություն-

ներով, որոնք փաստեցին, որ տարիների ընթացքում «մանրակրկիտ» աշխատանք է տարվել «Չայոց ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների հարցը» միջազգային ատյաններ տեղափոխելու հնարավորությունների ուսումնասիրման ուղղությամբ: Ելույթ ունենալով խորհրդարանում՝ նա նշեց, որ այդ աշխատանքների մեջ ներգրավված են պաշտոնաթող դիվանագետներ, ինչպես նաև թուրք եւ օտարազգի վստահելի իրավագետներ: Նշվեց նաև, որ Թուրքիայի կողմից այդ նոր մոտեցման որդեգրումը դրականորեն են գնահատում նաև մի շարք պետություններ:

Ա.Գյուլի հայտարարությունը գոհունակությամբ ընդունվեց մի շարք քաղաքական ուժերի եւ առանձին գործիչների կողմից: Երկրի հիմնական ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցությունը նույնիսկ պնդեց, որ այդ գաղափարի իրական հեղինակը ինքն է: Իսկ պաշտոնաթող դիվանագետ Գյունդուզ Աքթանը, որը Թուրքիայում համարվում է Չայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի «միջազգային-իրավական» ուղղության «հոգեւոր հայրը», Գյուլի հայտարարությունը բնութագրեց որպես «չափազանց քաջ»:

Չարցը քննության առնվեց ՑԽ հերթական նիստի ընթացքում, որը տեղի ունեցավ 2006թ. դեկտեմբերի 26-ին Ա.Գյուլի նախագահությամբ: Քննարկվեց երեք տարբերակ.

ա. դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Ֆրանսիայի խորհրդարանի Չայոց ցեղասպանության մասին հայտնի որոշումը բողոքարկելու նպատակով,

բ. դիմել Չաազայի Արդարադատության միջազգային դատարան,

գ. դիմել Չաազայի Միջազգային իրավարար մշտական դատարան:

Քննարկման արդյունքների մասին հաղորդագրություններն իրարամերժ էին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախապատվությունը տրվել է վերջին տարբերակին, այսինքն՝ որոշվել է դիմել Չաազայի Միջազգային իրավարար մշտական դատարան: Սակայն այդ որոշումն ունեցել է նախնական բնույթ, քանի որ համարվել է, որ ռիսկերը շատ են եւ արդյունքը՝ անկանխատեսելի: Այդ պատճառով, նախքան վերջնական որոշում ընդունելը, նախընտրելի է համարվել դիմել թուրք եւ օտարազգի իրավագետների խորհրդատվությանը: Այդ մասնագիտական քննության արդյունքները պահվում են գաղտնի:

Չնարավոր եղավ պարզել նաև, թե ինչպես են Թուրքիայում պատկերացնում Չաազայի Միջազգային իրավարար մշտական դատարանի դատաքննության ընթացքը: Ստեղծվում է երեքական հայ եւ թուրք դատավորներից կազմված ժամանակավոր դատական ատյան, որի նախագահ է նշանակվում երրորդ կողմի ներկայացուցիչը: Այդ ատյանը

քննության է առնում ՄԱԿ-ի 1948 թվականի Կոնվենցիայով ընդունված ցեղասպանության չափորոշիչներին Հայոց ցեղասպանության համապատասխանության հարցը՝ իրականացնելով դատաքննություն, ի թիվս այլոց, նաեւ հետեւյալ ուղղություններով.

ա. ստեղծում է մասնագետ-պատմաբաններից կազմված արխիվների ուսումնասիրման խումբ, որը պիտի ուսումնասիրի ինչպես թուրքական եւ այլ երկրների պետական, այնպես էլ Հ. Յ. Դաշնակցության ու Պոլսի Հայոց պատրիարքարանի արխիվները, եւ եզրակացություն ներկայացնի նրանց հաղորդագրությունների վավերականության վերաբերյալ,

բ. ուսումնասիրում է վիճակագրական տարաբնույթ տվյալներ, այդ թվում Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սպանվածների եւ հիվանդություններից մահացածների, հայերի տեղահանության ընթացքում մահացածների թվաքանակի եւ մահացածության պատճառների վերաբերյալ: Նախատեսվում է նույնիսկ ուսումնասիրել հայտնաբերված զանգվածային գերեզմաններում թաղվածների էթնիկական պատկանելության մասին տվյալները:

գ. ուսումնասիրում է ռազմական գործողությունների ընթացքը, այդ թվում նաեւ հայկական զինված ջոկատների կողմից իրականացված հարձակումները:

Նշվում է, որ Թուրքիան կդիմի Հաագայի համապատասխան դատարան միայն այն դեպքում, երբ համոզված լինի, որ բոլոր այդ հետազոտությունների արդյունքները կլինեն բարենպաստ թուրքական կողմի համար:

Հայտնի դարձած փաստերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Թուրքիայում տարվել ու տարվում է լուրջ նախապատրաստական աշխատանք՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու նպատակով դիմելու միջազգային-իրավական բնույթի քայլերի: Այդ հանգամանքը մեզ պարտադրում է ոչ միայն համակողմանի ուսումնասիրել Թուրքիայի պաշտոնական քաղաքականության այս նոր միտումները, այլեւ ձեռնարկել գործուն քայլեր՝ անհրաժեշտության դեպքում այդ քաղաքականությանը համարժեք հակահարված տալու եւ մեր իրավունքները միջազգային ատյաններում հաջողությամբ պաշտպանելու նպատակով:

**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՉԱՅԿԱԿԱՆ ՉՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ
Ռուբեն Մելքոնյան**

Չայտնի է, որ Թուրքիայի Չանրապետությունը որդեգրել է տարիներ շարունակ կիրառում է հայկական քրիստոնեական հուշարձանների ոչնչացման կամ էլ իսլամացման, թուրքացման քաղաքականություն: Տարբեր դիտարկումներ թույլ են տալիս եզրակացնել, որ հայկական հուշարձանները ոչնչացնելու կամ հայկականությունը ջնջելու համար թուրքական իշխանությունները կիրառում են տարբեր մեթոդներ.

1. հայկական պատմական հուշարձանները մատնվում են անուշադրության եւ ժամանակի ընթացքում, անխնամ մնալով, ավերվում են,

2. հայկական եկեղեցիները որպես սեփականություն հանձնվում են ներկայումս այդ տարածքներում բնակվող թուրքերին եւ քրդերին, որոնք էլ դրանք տնօրինում են ըստ իրենց կամքի,

3. պետական կարիքները պատրվակ համարելով՝ հուշարձանները քանդվում են,

4. հայկական կրոնամշակութային հուշարձանները զանազան միջոցներով թուրքացվում, իսլամացվում են:

Վերը նշվածներից այս վերջին կետը կարելի է հիմնավորել ամենաթարմ օրինակով, որին վերջերս ականատես ենք եղել Թուրքիայում: Դեռեւս անցյալ տարվանից Կարսի Առաքելոց եկեղեցին գտնվում էր վերանորոգման մեջ: Նշենք, որ Աբաս Բագրատունու թագավորության ժամանակ կառուցված եկեղեցին, դարերի ընթացքում անընդհատ ձեռքից ձեռք անցնելով, մերթ գործել է որպես եկեղեցի, մերթ վերածվել մզկիթի: 1920թ. Կարսի անկումից հետո այն փակվում է եւ այդպես լքված մնում մինչեւ 1964թ.: Այդ ընթացքում եկեղեցին օգտագործվում է որպես բենզինի պահեստ եւ նմանատիպ այլ նպատակներով: 1964թ. եկեղեցին վերածվում է թանգարանի, սակայն 1978-ից մինչեւ 1993թ. կրկին լքվում է: 1993թ. այն փոխանցվում է Թուրքիայի կրոնական հարցերով վարչությանը եւ սկսում օգտագործվել որպես մզկիթ՝ Քուլմբեթ Ջամի անունով:

Ինչպես նշեցինք, այն անցյալ տարվանից սկսել էր վերանորոգվել, եւ կարծիքներ էին հնչում, թե Առաքելոցը կամ կվերաբացվի որպես եկեղեցի,

սակայն առանց խաչի՝ այդպիսով կիսելով Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու բախտը, կամ կվերածվի թանգարանի: Այս ամենը հիմնավորվում էր նաեւ այն հանգամանքով, որ Կարսի տեղական իշխանությունները ցանկանում են, որպեսզի վերաբացվի հայ-թուրքական սահմանը, եւ սա կարող էր համարվել յուրատեսակ քայլ: Սակայն իրականում Առաքելոց եկեղեցին վերաբացվեց որպես մզկիթ: Ավելին, եկեղեցու շուրջը ներկայումս կառուցվում է պարիսպ, որն ունի իսլամական ճարտարապետության բոլոր աչքի ընկնող հատկանիշները: Խնդիրն այն է, որ Թուրքիան մզկիթների պակաս չունի, ամենուր լայն թափով մզկիթաշինության աշխատանքներ են ընթանում, եւ Առաքելոց եկեղեցին մզկիթի վերածելը եւ իսլամական ոճի պարսպով շրջապատելն ունի հստակ քարոզչական նպատակ: Բանն այն է, որ քաղաքի այն հատվածը, որտեղ գտնվում են Առաքելոց եկեղեցին, բերդը, Վարդանի կամուրջը, Կարսի տուրիստական կենտրոնն է կազմում, եւ հենց այստեղ են հաճախում զբոսաշրջիկները: Մեր այնտեղ գտնվելու պահին այցելել էր չեխ զբոսաշրջիկների մի խումբ, որոնց թուրք զբոսավարը բացատրում էր դեռեւս սելջուկ թյուրքերի ժամանակվանից պահպանված Քունբեթ մզկիթի մասին: Կարսի եկեղեցի հայերին թույլ են տալիս մտնել միայն կոշիկները հանելուց հետո, ինչը պարտադիր է ցանկացած մզկիթ մուտք գործելու համար: Սակայն հետաքրքիր է նաեւ, որ Կարսի բնակիչների մի մասը չի աղոթում մզկիթի վերածված Առաքելոց եկեղեցում, եւ սա ապացույցն է այն բանի, որ ժողովրդի մեջ Առաքելոցը շարունակում է ընկալվել որպես եկեղեցի: Դրա փոխարեն Կարսի նահանգի մուֆթի Իլյաս Սերենլին նշել է, որ տուրիստները կարող են միայն այցելել Առաքելոց, սակայն պատարագ մատուցել չի կարելի:

Երբ այցելում ես Թուրքիայի հյուսիսարեւելյան շրջանների զբոսավայրեր, ակնհայտ է պետական քարոզչությունը: Դեպի Անի տանող ճանապարհին կառուցված է հայերի կողմից «կոտորված» թուրքերի հուշարձանը, որը գտնվելով անմիջապես ճանապարհի եզրին՝ գրավում է զբոսաշրջիկների ուշադրությունը, իսկ թուրք զբոսավարներն իրենց ծրագրի մեջ անպայման ներառում են օտարերկրացիներին այդ հուշարձանի հետ ծանոթացնելը: Վերջին տարիներին նկատվում է նաեւ հյուսիսարեւելյան շրջանները զբոսաշրջիկների համար ավելի գրավիչ դարձնելու ձգտումը, եւ որպես դրա առիավատյա կարելի է դիտել այն հսկայածավալ ճանապարհաշինական աշխատանքները, որոնք կատարվում են այդ շրջաններում: Օրինակ, Անի տանող նախկին նեղ ճանապարհը լայնացվել է գրեթե հինգ անգամ, ներկայումս էլ շարունակվում են աշխատանքներն այդ ուղղությամբ:

* * *

Բնական է, որ Պոլսո Չայոց պատրիարքարանը կամ համայնքը որոշ ջանքեր է գործադրում հայկական հուշարձանների պահպանության համար, որոնք, ինչպես ցույց են տալիս փաստերը, էական արդյունք չեն տալիս: Սակայն ուշագրավ է, որ հայկական կրոնամշակութային հուշարձանների, գերեզմանների պահպանության ուղղությամբ վերջերս սկսել են ջանքեր գործադրել նաեւ ծպտյալ հայերը, որոնք այդ միջոցով նաեւ երբեմն ինքնաբացահայտվում են: Մի քանի տարի առաջ Մալաթիայում տեղի էր ունեցել ստորագրահավաք, որով պահանջում էին վերաբացել Չավուշօղլու թաղամասում գտնվող հայկական եկեղեցին: Ինչպես արձանագրում էր թուրքական մամուլը, ստորագրել էին շուրջ 120 քաղաքացի, որոնք բոլորն ունեին ոչ հայկական անուն-ազգանուններ: Սա նույնիսկ որոշ մասնագետների հիմք տվեց պնդել, որ դրանք Մալաթիայում բնակվող ծպտյալ հայերն են:

Այս նույն գործընթացի տրամաբանական շարունակությունն է նաեւ օրերս թուրքական մամուլում հայտնված այն տեղեկությունը, համաձայն որի՝ սասունցի հայերից կազմված միությունը պայքար է սկսել Սասունում գտնվող կիսավեր հայկական եկեղեցիների եւ գերեզմանատների համար: Կազմակերպության նախագահ Ազիզ Դադջըն սկզբնական շրջանում միայնակ է փորձել գործել, սակայն պետական տարբեր օղակների հետ աշխատանքում բախվել է զանազան դժվարությունների եւ հասկացել, որ ավելի նպատակահարմար է գործել հասարակական կազմակերպության միջոցով եւ այդպիսով ձեւավորել է սասունցիների միությունը: Կազմակերպությունը սկսում է դիմել պատկան մարմիններին՝ ներքին գործերի նախարարություն, նահանգապետարան, կադաստրի կոմիտե եւ հասնում է մինչեւ Թուրքիայի Ազգային ժողովի մարդու իրավունքների հանձնաժողով: Նրանք պահանջում են գերեզմանները գրանցել որպես հայկական, եկեղեցիներին նույնպես պատշաճ վերաբերմունք ցուցաբերել. թույլ տալ, որ ավերված եւ հաճախ ախոռի վերածված, թալանված եկեղեցիներում կատարվեն արարողություններ, այցելի քահանա եւ այլն:

Ուշագրավ է, որ ի պատասխան այս կազմակերպության հարցման՝ Բաթմանի նահանգապետարանը պնդել է, որ եկեղեցիները եւ գերեզմանատներն ավերվել ու լքվել են, քանի որ հայերը հեռացել են այդ տարածքներից: Կադաստրի կոմիտեում եւ այլ տեղերում եկեղեցիները գրանցված են որպես ավերակ տուն, հայկական գերեզմանները գրանցված են որպես անտառ, հողատարածք եւ այլն: Սասունցիների միությունը պահանջում է դրանց վերագրանցումը, ընդ որում՝ ճիշտ տարբերակով: Ինչպես նշում է

Ազիզ Դադջըն, «Պետությունը չի ուզում դրանք գրանցել որպես հայկական գերեզմանատուն, չի ցանկանում օգտագործել անգամ հայ բառը: Սակայն սահմանադրության հոդվածների համաձայն՝ պարտավոր է գրանցել»:

Մյուս հարցն այն է, որ պետական կառույցները նշում են, թե այդ վայրերում հայեր չկան, սակայն կազմակերպության անդամները պնդում են հակառակը՝ նշելով, որ այդ վայրերում ապրում են հայեր, այն էլ՝ ընտանիքներով: Նշենք, որ Ազիզ Դադջընի եւ մյուսների այս պնդման արդարացիության վկան ենք եղել նաեւ մենք վերջերս. Սասունի մի շարք գյուղերում կան ծպտյալ հայեր, որոնք գտնվում են ինքնաբացահայտման ճանապարհին, նրանց արդեն պայմանականորեն կարելի է կոչել «ծպտյալ»: Մասնավորապես, նրանք գերազանց խոսում են հայերեն (Սասնո բարբառ), ունեն հայկական ինքնագիտակցություն, ինչպես մեզ փոխանցեցին՝ հաճախում են հայկական եկեղեցիներ, նույնիսկ ամեն տարի հուլիսին գնում են Մարութա սար՝ ուխտի: Սակայն պաշտոնական փաստաթղթերում նրանք գրանցված են որպես իսլամ եւ այլ ազգի ներկայացուցիչ (քուրդ, արաբ եւ այլն): Այս մարդիկ ցեղասպանության ժամանակ ապաստան են գտել տեղի մուսուլման բնակիչների մոտ եւ փրկվելուց հետո սկսել հանդես գալ որպես իրենց ապաստան տված ազգի ներկայացուցիչ: Այս մասին սասունցիների միության ներկայացուցիչ Էրդալ Յիդրընը նշում է, որ ժամանակին որոշ մուսուլմաններ փրկել են իրենց պապերին, սակայն այն պատճառով, որ պապերը եղել են արհեստավորներ, եւ դա փրկողներին էլ է ձեռնտու եղել. «Մեր հարեւանները, այսինքն՝ աղաները, մեզ իրենց մեջ բաժանել էին: Ամեն մի հայ ընտանիքի մի աղա էր վերցրել, եւ կար «իմ հայր» հասկացությունը: Մենք առանձին աղա ունեինք, Ազիզ Դադջընի ընտանիքը՝ առանձին: Մեզ պատկանող ամեն ինչ նրանք ընկալում էին իրենցը, որովհետեւ իրենք իրենց համարում էին մեր տերը: Սակայն ամենացավալին այն է, որ մեր եկեղեցիներին եւ գերեզմանատներին ընդհանրապես հարգանք չեն ցույց տալիս: Երբ մարդ է մահանում, անհրաժեշտ է մեր սովորույթների համաձայն թաղել, սակայն դա չենք կարողանում անել»:

Սասունի բնակլիմայական պայմանների պատճառով սասունցիների մեծ մասը ձմռանը բնակվում է այլ վայրերում, նաեւ Ստամբուլում, իսկ գարնանը եւ ամռանը գալիս են գյուղեր՝ հող մշակելու կամ ծնողներին օգնելու համար: Սակայն նրանց կապվածությունը հայրենի հողի հետ ակնառու է: Ինչպես նշում է Էրդալ Յիդրընը, իրենք ցանկանում են, որ որտեղ էլ ապրեն՝ թեկուզ հարյուր տարի էլ անցնի, կարողանան գալ եւ այցելել իրենց գերեզմանատները: Անդրադառնալով այդ տարածքներում հայ լինել-չլինելու խնդրին՝ նա նշում է. «Երբ մեր պապերն այնտեղ

ապրում էին, մուսուլման հարեւաններ չունեինք, նրանք ավելի ուշ եկան, բնակություն հաստատեցին: Հիմա ասում են, թե հայ չի մնացել, պետք է հարցնել, թե ինչու հայ չի մնացել: Այնուամենայնիվ, մենք երախտապարտ ենք, որ մեզ փրկել են, սակայն եթե նրանց պապերը մեզ լավություն են արել, իսկ թոռներն այսպես են վարվում, սա մեզ շատ է վշտացնում: Մեր ընտանիքներն էլ են մասնատվել. կեսը քրիստոնյա է մնացել, կեսը՝ իսլամացվել: Ես իսլամացված քեռիներ, հորաքույրներ ունեմ: Նրանք շարունակ ստիպված են ապացուցել, որ իսլամ են: Նրանց մի մասը նույնիսկ մոլեռանդ մուսուլման է դարձել»:

Ազիզ Դադջըն եւ սասունցիների միությունը պահանջում են եկեղեցիներից օգտվելու իրենց բնական իրավունքը. «Մենք չենք կարողանում օգտագործել մեր եկեղեցիները, որոնք ավերակի են վերածվել: 1915-ից մինչեւ օրս մեր գյուղ մի քահանա չի այցելել: Պետք է կնքվենք՝ գնում ենք Ստամբուլ, ամուսնությունների դեպքում՝ եւս: Մենք դեռ կանք Սասունում, այնտեղ դեռեւս ընտանիքներով մնացածներ էլ կան: Մենք հարյուրավոր եկեղեցիներ ունենք, որ օգտագործելի չեն: Մեր ամենակարեւոր եկեղեցին Մարութա սարի վանքն է, ամեն տարի հուլիսի 25-ին այնտեղ ենք գնում, մատաղ անում: Այնտեղի հայերի քրիստոնյա մնալու ամենազլխավոր պատճառն այդ վանքն է: Մուսուլմանների գերեզմանները գրանցում են, մեր հայերի գերեզմանները չեն գրանցում: Ես արեւելքի մարդ եմ եւ ես իմ գերեզմանը չեմ լքի»:

Այսպիսով, մենք ականատեսն ենք բռնի կրոնափոխ հայերի խնդրի եւս մեկ դրսեւորմանը, երբ հայկական մշակութային հուշարձանների պահպանության հարցը առաջ է քաշվում ոչ թե միջազգային կառույցների կամ Հայաստանի կողմից, այլ ներսից՝ Թուրքիայի քաղաքացի հանդիսացող հայերի կողմից:

ԱՄԵՐԻԿԱ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Սարգիս Հարությունյան

Լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ առաջիկա ամիսներին Մերձավոր Արեւելքում Վաշինգտոնի ուշադրությունը հատկապես կենտրոնանալու է Անկարայի ուղղությամբ, եւ գոյություն ունեն առնվազն երկու պատճառներ, որոնք «թուրքական հարցը» առանձնացնում են ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականությունում:

Առաջին. աֆղանական, իրաքյան ու լիբանանյան կամպանիաների, ինչպես նաեւ Գազայի հատվածում «Համասի» իշխանության գալու հետեւանքով Մերձավոր Արեւելքում դժվարին կացության մեջ հայտնված ԱՄՆ-ի համար թուրքական քաղաքականությունը ստացել է էլ ավելի կարեւոր նշանակություն, քան մինչեւ 2003թ. իրաքյան պատերազմն էր:

Երկրորդ. այս տարվա հուլիսի սկզբին Թուրքիայի սահմանադրական դատարանում բանակի անուղղակի աջակցությամբ մեկնարկեց իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) փակելու մասին գործը, իսկ կառավարության ենթակայության ներքո գտնվող ներքին գործերի ու անվտանգության մարմինները հայտարարեցին բանակի բարձրաստիճան հրամանատարության հետ կապեր ունեցող պաշտոնաթող գեներալների ձերբակալության մասին¹, որոնք իբր նպատակ են ունեցել կազմակերպել պետական հեղաշրջում: Թեեւ ներկայացվածը կարելի է բնորոշել որպես թուրքական ուժային կառույցների միջեւ ի հայտ եկած «հակամարտություն», սակայն ակնհայտ է, որ

❖ թուրքական բանակ-իսլամիստներ ներկայում կրկին հրապարակ իջած բախումներն իրենց բնույթով ամենասուրն են ԱԶԿ իշխանության ողջ տարիներին, հետեւաբար, այստեղ ավելի հիմնավորված է թվում խոսելը կողմերի միջեւ ձեւավորված ռազմավարական կարգի հակասությունների մասին,

❖ դժվար թե առանց արտաքին զոնդաժի Թուրքիայի բանակում որոշեին ձեռնամուխ լինել իշխանությունից ԱԶԿ հեռացնելու՝ միջազգային տեսանկյունից խնդրահարույց գործընթացին. այսինքն՝ չպետք է բացառել, որ այստեղ գործ ունենք նաեւ Վաշինգտոնի սպասումների հետ:

Ներկայացվածում իր տեղն ունի նաեւ Հայաստանը: Հուլիսի 5-ին հայտնի դարձավ, որ Հայաստանի նախագահը հրավիրել է իր թուրք

պաշտոնակցին ս.թ. սեպտեմբերի 6-ին այցելել Երեւան՝ դիտելու ֆուտբոլի աշխարհի առաջնության նախընտրական փուլի հանդիպումը Հայաստանի եւ Թուրքիայի հավաքականների միջեւ: Իհարկե, նման կարգի հրավերը եւ վերջինիս հրապարակումը հիմք են տալիս ենթադրելու, որ պաշտոնական Երեւանի նախաձեռնության հետեւում միայն հայրենի դիվանագիտության ջանքերը չեն: Սակայն ուշագրավն այստեղ այն է, որ հայ-թուրքական հարաբերություններում փոփոխություն մտցնելու հարցը կրկին սեղանին է դրվում ամերիկա-թուրքական սպասվող զարգացումների եւ ՆԱՏՕ-ին Վրաստանի ենթադրվող անդամակցության ֆոնին²:

«RAND»-ի զեկույցներն ամերիկա-թուրքական հարաբերությունների մասին

Թեեւ 2003թ. ի վեր ամերիկա-թուրքական փոփոխվող հարաբերությունների վերաբերյալ հատկապես ամերիկյան փորձագիտական հանրության կողմից շատ են ներկայացվել վերլուծական հրապարակումներ, սակայն մենք առանձնացրել ենք ամերիկյան ազդեցիկ «RAND Corporation»-ի պատրաստած զեկույցները:

2003թ. մարտի 1-ից հետո, երբ թուրքական խորհրդարանը մերժեց Պենտագոնի հայտը՝ թույլատրել ամերիկյան 62 հազարանոց զորամիավորմանը, օգտագործելով Թուրքիայի տարածքը, Իրաք ներխուժել հյուսիսից, «RAND Corporation»-ի կողմից ամերիկա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ հրապարակվել են երեք զեկույցներ, երկուսը՝ միայն այս տարի³:

2003թ. լույս տեսած զեկույցում մի կողմից ամրագրվում էր այն դրույթը, որ Թուրքիան մուտք է գործել քաղաքական լուրջ փոփոխությունների մի ժամանակաշրջան, ինչը կարող է խոր ներգործություն ունենալ նրա արտաքին քաղաքականության վրա, մյուս կողմից՝ առանձնաճանաչում էին հետեւալ կետերը.

- ❖ ավելի քան մեկ տասնամյակ տեւած արդիականացումից հետո Թուրքիան բախվել է բարեփոխումների ու ղեկավարող շրջանակների սերնդափոխության հետ կապված լուրջ խնդիրների,

- ❖ առաջիկա տասնամյակում Թուրքիան վարելու է ավելի ակտիվ արտաքին քաղաքականություն՝ միտված Մերձավոր Արեւելքին եւ հետխորհրդային տարածքին, իսկ մյուս կողմից՝ հատկապես թուրքական ներքին զարգացումները պատճառ են հանդիսանալու, որ Անկարայի եվրաինտեգրումը հանդիպի ավելի լուրջ դժվարությունների,

❖ նշված զարգացումների արդյունքում՝ ՆԱՏՕ-ի ու ԵՄ-ի համար Թուրքիան կարող է հանդես գալ որպես եվրոպական տարածաշրջանի անվտանգության «սպառող», քան «արտադրող», այսինքն՝ կրճատվելու է Թուրքիայի ներգրավվածությունը եվրոպական անվտանգության ապահովման գործում,

❖ Եւ վերջապես, ներկայացվածից բխեցվում էր, թե այդ պարագայում կսահմանափակվեն Արեւմուտքի հնարավորությունները էներգակիրներով հարուստ Պարսից ծոցում. «Յետեւաբար, ապագայում ԱՄՆ-ն ու ՆԱՏՕ-ն չեն կարող ավտոմատ կերպով ստանալ թուրքական [ռազմական] կարողություններն օգտագործելու թույլտվություն»:

2008թ. հրապարակված առաջին զեկույցի հիմնական հետեւությունն է. «Ներկայում Մեծ Մերձավոր Արեւելքում, Թուրքիայի անվտանգության քաղաքականությունում Եւ թուրքական հասարակությունում առկա միտումները քայքայիչ ներգործություն են ունենում [ամերիկա-թուրքական] համագործակցության հիմքերը կազմող շահերի ընդհանրության վրա: Նշվածի անփոփոխ մնալու պարագայում այդ միտումները կարող են կրճատել ԱՄՆ ազդեցությունը Թուրքիայում Եւ մեծացնել անկայունությունը Մերձավոր Արեւելքում»: Որպես հետեւություններ զեկույցում առանձնանում են.

❖ ապագայում ԱՄՆ-ի համար Թուրքիան, ըստ ամենայնի, կդառնա սակավ կանխատեսելի ու ավելի բարդ դաշնակից, Եւ այդ առումով առաջիկայում Վաշինգտոնը գործ կունենա ավելի անկախ մտածող ու ակտիվ Թուրքիայի հետ,

❖ հաշվի առնելով Մերձավոր Արեւելքում աճող թուրք-ամերիկյան հակասությունները՝ ապագայում Անկարան ավելի դժվարությամբ կհամաձայնվի թույլատրել Պենտագոնին օգտագործել Թուրքիայի տարածքում առկա ռազմակայանները (մասնավորապես, «Ինջիրլիք» ավիաբազան), Եւ այդ պատճառով ապագայում ԱՄՆ-ը պետք է իր հաշվարկներից հանի թուրքական ռազմակայաններն օգտագործելու տարբերակը (ըստ զեկույցի, 1991թ. իրաքյան պատերազմի ժամանակ Անկարայի որոշումը՝ թույլատրել Պենտագոնին օգտագործել թուրքական ռազմակայանները, ավելի շուտ բացառություն էր, քան օրինաչափություն),

❖ ներկայում ԱՄՆ–Թուրքիա հարաբերություններում ստեղծված իրավիճակն առանձնանում է նաեւ այն պատճառով, որ այսօր Անկարան միաժամանակ խնդիրներ ունի թե՛ ԱՄՆ-ի, թե՛ ԵՄ-ի հետ,

❖ ամենայն հավանականությամբ, Թուրքիան չի աջակցի Սիրիային ու Իրանին մեկուսացնելու ԱՄՆ քաղաքականությանը, ավելին, այսօր քաղաքական ու էներգետիկ ոլորտներում նկատվում է թուրք-իրանական ու թուրք-սիրիական բավական սերտ համագործակցություն,

❖ մոտ հեռանկարում ամերիկա-թուրքական հարաբերություններում որպես թիվ մեկ խնդիր է հանդես գալու քրդական հարցը, եւ այդ հարցի հետ կապված զարգացումները Անկարան դիտարկելու է որպես ցուցիչ՝ գնահատելու ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների դինամիկան,

❖ անցած տարիներին Թուրքիայում ընթացող ժողովրդավարական գործընթացների արդյունքում բանակը եւ քեմալիստական ուժերը կորցնում են իշխանությունը երկրում (դինամիկան այդ ուղղությամբ է), նրանց փոխարինելու են գալիս այդ թվում իսլամիստական ուժերը, հետեւաբար ԱՄՆ-ի համար ավելի բարդ է դառնում ազդեցություն գործել Անկարայի արտաքին քաղաքականության ձեւավորման վրա:

Եվ վերջապես, երրորդ զեկույցը ներկայացնում է ԱԶԿ-թուրքական բանակ ներկա հակասությունների հետագա զարգացման չորս սցենար.

❖ Ըստ առաջին՝ ամենից հավանական դիտվող սցենարի, այսուհետ Թուրքիայի ներքին ու արտաքին հարցերում ԱԶԿ-ն կորդեգրի «իսլամականացման» ավելի մեղմ դիրքորոշում եւ հանդես կգա որպես Անկարայի եվրաինտեգրման գիծն առաջ տանող քաղաքական ուժ՝ բանակի հետ ընթացող ներկայիս «հակամարտությունից» դաս քաղելով, որ գոյություն ունեն «կարմիր գծեր», որոնք նա չպետք է անցնի:

❖ Համաձայն երկրորդ սցենարի՝ ԱԶԿ-ն կորդեգրի Թուրքիայի «սողացող իսլամականացման» տարբերակը, երբ Էրդողանի գլխավորած քաղաքական ուժը ձեռնամուխ կլինի Թուրքիայի ներքին կյանքի ու արտաքին քաղաքականության աստիճանական, աննկատ իսլամականացմանը: Սակայն այս տարբերակը դժվար հասանելի է դիտվում, քանի որ այն կբերի ներքաղաքական պայքարի սրացմանը, որին կհետեւի բանակի միջամտությունը:

❖ Որպես երրորդ սցենար է դիտվում Թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից ԱԶԿ փակումը: Սակայն անմիջապես նշվում է, թե այս տարբերակը քիչ խնդիրներ կլուծի եւ կտանի ճգնաժամի հետագա խորացմանը, քանի որ ներկայում թուրքական քաղաքական կուսակցություններից ԱԶԿ-ն ամենից բարձր վարկանիշն ունի (մոտ 40%, նրանից հետո եկող Հանրապետական-ժողովրդական կուսակցությունն ունի մոտ

20% վարկանիշ), եւ կուսակցության ակտիվը կարող է նոր ընտրություններում կրկին հաղթել՝ ուրիշ անունով գրանցելով նոր կուսակցություն: Եվ վերջապես, ԱԶԿ փակումը լրջորեն կսրի հարաբերությունները ԵՄ-ի հետ:

❖ Չորրորդ սցենար՝ ռազմական հեղաշրջում: Այս սցենարն ունի երկու ենթասցենար՝ «փափուկ հեղաշրջում» եւ ուղղակի ռազմական հեղաշրջում: Թեեւ վերջինս ավելի քիչ հավանական է համարվում, սակայն այն ներկայացվում է որպես Երդողանի կառավարության դեմ պայքարում թուրքական բանակի զինանոցում եղած վերջին միջոց, եթե ԱԶԿ-ն անցնի «կարմիր գծերը», իսկ բանակն էլ սպառնի պայքարի այլ ձեւերը:

Առնչություններ Հայաստանի հետ

Թեեւ «RAND Corporation»-ի 2003թ. զեկույցում ուղղակի նշվում է, որ Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ դարձել է Բաքվի հետ Անկարայի հարաբերությունների պատանդ, սակայն նույն այդ զեկույցում եւ 2008թ. առաջին զեկույցում աչքի են զարնում հետեւյալ պահերը.

❖ թուրք-հայկական հարաբերությունների հեռանկարի մասով՝ շատ ավելի մեծ տեղ է հատկացվում Ղարաբաղյան հիմնախնդրին, քան, օրինակ, Հայոց ցեղասպանության հարցին կամ հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցությանը,

❖ այդքանով հանդերձ, հարցի առնչությամբ ներկայացվում է, փաստորեն, Անկարայի մոտեցումը. թուրք-հայկական սահմանի վերաբացումը հնարավոր է միայն Ղարաբաղյան հակամարտության կարգավորումից հետո:

Այդ իմաստով, տարբերություն կա թուրք-հայկական հարաբերությունների համատեքստում Հայոց ցեղասպանության հարցը քննարկելիս: Եթե 2003թ. զեկույցում նշվում էր, որ թեեւ ԱՄՆ հայկական լոբբիի շանսերը գնալով աճում են, բայց ցեղասպանության փաստի ճանաչումը կվնասի հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը, ապա 2008թ. երկու զեկույցներում վերջին հատվածը բացակայում է:

Ներկայացվածը հիմք է տալիս ենթադրելու, որ հայ-թուրքական հարաբերություններում որեւէ «ճեղքումից» հետո, պաշտոնական Երեւանին հարկ է սպասել Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ամերիկյան կողմի ջանքերի կտրուկ ակտիվացմանը:

¹ Այդ օրն ընդհանուր առմամբ ձերբակալվել են 24 հոգի, այդ թվում թուրքական բանակի հրամկազմում նախկինում բարձր պաշտոններ զբաղեցրած գեներալներ Յուրսի Տոլունը եւ Սեներ Էրուլուրը: Ձերբակալվածների թվում է նաեւ Անկարայի առեւտրաարդյունաբերական պալատի ղեկավար Սինան Այդունը, ով հայտնի է Թուրքիայի բանակի հրամանատարության հետ իր սերտ հարաբերություններով:

² Այդ իմաստով ուշագրավ էր ս.թ. հունիսի 18-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների տանը տեղի ունեցած լսումների ժամանակ Սիացյալ Նահանգների պետքարտուղարի Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով օգնական Դենիել Ֆրիդի կատարած աննախադեպ հայտարարությունը. «Թուրքիան պետք է անդրադառնա իր պատմության մութ էջերին. Օսմանյան կայսրության գոյության վերջին [չրջանում] մեկ ու կես միլիոն հայերի զանգվածային սպանություններին ու բռնի արտաքսմանը: Դա հեշտ չի լինի, բայց ԱՄՆ-ի համար էլ հեշտ չէր անդրադառնալ մեր պատմության մութ էջերին»:

³ «RAND Corporation»-ի հրապարակած գեկույցներն ըստ հերթականության՝ «Turkish Foreign Policy in Age of Uncertainty» (2003թ., «Թուրքական արտաքին քաղաքականությունը անորոշության փուլում», հեղինակներ՝ Սթեֆըն Լարաբի (F. Stephan Larrabee), Յան Լեսեր (Ian O. Lesser)), «Turkey as a U.S. Security Partner» (2008թ., «Թուրքիան որպես անվտանգության գծով ԱՄՆ գործընկեր», հեղինակ՝ Սթեֆըն Լարաբի (F. Stephan Larrabee)), «The Rise of Political Islam in Turkey», (2008թ., «Քաղաքական իսլամի վերելքը Թուրքիայում», հեղինակներ՝ Էնջըլ Ռաբասա (Angel Rabasa), Սթեֆըն Լարաբի (F. Stephan Larrabee)):

POST-KOSOVO. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ *Ալեքսեյ Տերեշչենկո*

Կոսովոյի նախադեպը չէր կարող աննկատ մնալ Հարավային Եվրոպայի երկրներում:

Անգամ ներկայիս դինամիկայի պահպանման պարագայում անջատողական շարժումները Եվրոպայի հարավում տարեցտարի ավելի են աշխուժանում: Գիշտ է, վերջին տարիներին նրանք հիմնականում հրաժարվել են զինված պայքարից, բայց դա, թերևս, կապված է նաև խաղաղ ճանապարհով անկախություն ստանալու հույսերի հետ:

* * *

Իտալիայում կան բազմաթիվ տարածաշրջանային շարժումներ, սակայն այսօր սոսկ դրանցից երկուսը լուրջ հենք ունեն:

Առաջինը Հյուսիսային լիգայի շարժումն է: Նրա հիմնական հենակայաններն են Լոմբարդիան, Վենետոն եւ Պյեմոնտը՝ Հյուսիսային Իտալիայի խոշոր շրջանները: Դրանցից յուրաքանչյուրում առաջացել են իրենց սեփական ինքնավարական շարժումները: Առաջինը՝ Վենետոյում, որը Իտալիայի կազմի մեջ է մտել 1866թ.: Այնտեղ երբեք չեն դադարել պնդումները, թե Վենետիկը միանգամայն ինքնուրույն քաղաքակրթություն է եւ Իտալիայի կարիքը չունի: Այս շարժումը կրում է վենետիկյան անվանումը:

1980-ական թվականներին Հյուսիսային Իտալիայի մի քանի անջատ տարածաշրջանային շարժումները, Ումբերտո Բոսիի գլխավորությամբ, միավորվեցին Հյուսիսային լիգայի մեջ: Լիգան հանդես է գալիս Պադանիայի ինքնավարության կամ լիակատար անկախության օգտին:

Թեեւ «Պադանիա» բառը նշանակում է Պո գետի հովիտ, այդ անվան տակ հասկացվում է Հյուսիսային եւ Միջին Իտալիան (ընդհուպ մինչեւ Տոսկանա եւ Ումբրիա), որը հակադրվում է Հարավին (Հռոմի հետ միասին)՝ որպես կոռուպցիայի, մաֆիայի եւ անբանների թագավորության: Հյուսիսում, արդեն դարի առաջին կեսին, չէին սիրում նեապոլցիներին ու սիցիլիացիներին, իսկ այժմ նաև վախենում են արտասահմանցի ներգաղթյալներից (առաջին հերթին՝ արաբական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներից): Լիգայի առաջին հաջողությունը 90-ական թվականների կոռուպցիոն սկանդալներից հետո էր, ուր ներքաշված էր Հռոմի

կառավարությունը: 1996թ. Լիզան հավաքեց քվեների 10,1 տոկոսը (իսկ Վենետոյում՝ 30 տոկոսը): Դրանից հետո Մանթուայում անգամ հիմնվեց այլընտրանքային խորհրդարան, եւ անցկացվեցին ընտրություններ:

Եիշտ է, հետո իտալացիների մեծ մասը հիասթափվեց Լիզայից: Քչերն էին ցանկանում Յոնի հետ լիովին խզել կապերը. նրանց միանգամայն բավարարում էր ֆեդերալիզմը, այսինքն՝ սեփական հարկերն իրենց մոտ ծախսելու լայն հնարավորությունը եւ տեղական մարզային կառավարության մեծ անկախությունը:

Այդ իսկ պատճառով 2000թ. Լիզան նույնիսկ դաշինք կնքեց Բեռլուսկոնիի «Առաջ, Իտալիա» կառավարող կուսակցության հետ: Սակայն Լիզայում ձեւավորված է բավական կոշտ ու հետեւողական գաղափարախոսություն: Նա հրաժարվում է մյուս իտալացիների հետ որեւէ ազգակցությունից՝ իր նախնիներ համարելով ցիզալպինյան գալերին. ահա այսպես է Իտալիայում աշխատում կելտական առասպելը:

Լիզայի մյուս խորհրդանիշը առասպելական զինվորն է, որը մարտնչում է Ֆրիդրիխ Բարբարոսայի դեմ:

Լիզայի օրհներգը «VaPensiero»-ն է՝ Ջուզեպե Վերդիի «Նաբուգո-դոնոտոր» օպերայից. հրեա տարագիրների երգչախումբ, որը ողբում է հայրենի երկրի համար:

Յյուսիսային Լիզան, որը հասարակական առումով՝ պահպանողական եւ տնտեսական հարցերում, ազատական կուսակցություն է, նախեւառաջ նախատեսված է միջին խավի համար: 2006թ. վերջին ընտրություններին այն հավաքեց 4,6 տոկոս, ինչն ամենեւին էլ փոքր չէ՝ հաշվի առնելով, որ այդ տվյալը վերաբերում է ողջ Իտալիային: Պո գետից հյուսիս բնակվող իտալացիների կեսից ավելին Յարավային Իտալիայից անջատումը համարում է օգտավետ, իսկ 20 տոկոսը՝ ցանկալի:

Լիզան ունի արտահայտիչ կարգախոսներ եւ ցուցապաստառներ: Յատկապես տպավորիչ է այն ցուցապաստառը, որին պատկերված է հյուսիսամերիկյան հնդկացի եւ կողքին մակագրություն. «Նրանք (այսինքն՝ հնդկացիները—*իսմբ.*) չկարողացան սահմանափակել ներգաղթը եւ այժմ ապրում են ռեզերվացիաներում»:

Բացառությամբ Լիզայի, Իտալիայում միակ իսկական հզոր անջատողական շարժումը գտնվում է Տրենտինո-Ալտո Ադիջեում (Յարավային Թիրոլում)՝ տարածք, որը 1920թ. բռնի կերպով անջատվել է Ավստրիայից եւ միացվել Իտալիային: Բնակչության մեծամասնությունը գերմանացի է:

Ներկայումս ընթանում է երկրամասից իտալացիների աստիճանական դուրսնդում, քանզի ամբողջը տնօրինում է գերմանացի մեծամասնութ-

յունը՝ փաստացիորեն վերածվելով արտոնյալ դասի: Շատ է դժվարացել իտալացիների ներգաղթը Չարավային Թիրոլ, որովհետև այնտեղ չափազանց բարձր են հարկերը, իսկ պետական նպաստները շուտ չեն տրվում: Բայց անգամ այն իտալացիները, որոնք այնտեղ ապրում են, կամաց-կամաց հեռանում են:

Միեւնույն ժամանակ, Չարավային Թիրոլի իշխող կուսակցությունը փորձում է Ավստրիային համոզել օրինագիծ մտցնելու Չարավային Թիրոլի ինքնորոշման անհրաժեշտության մասին՝ այն Չյուսիսայինին վերամիավորելու նպատակով: Ներկայումս ծայրահեղական գործունեությունը մարել է, սակայն 50–80-ական թվականների ընթացքում իրականացվել է 300-ից ավելի ահաբեկչական գործողություն:

Մնացած Իտալիայում շարունակվում է գերիշխել Ռիսորջիմենտոյի՝ 19-րդ դարում իտալական հողերի միավորման մասին պաշտոնական առասպելը, որտեղ իտալական միասնությունը մատուցվում է որպես գերագույն արժեք ու երկրի բարգավաճման միակ նախապայման: Սակայն գրեթե յուրաքանչյուր տարածաշրջան ունի սեփական անջատողական կուսակցությունը:

Վենետիզմի մասին վերն արդեն խոսվեց: Լիգուրական ինքնավարական շարժումը պահանջում է Լիգուրիայի ինքնորոշում, որը 700 տարվա անկախությունից հետո անօրինական կերպով միացվել է Պյեմոնտին: Ի տարբերություն Չյուսիսային Իտալիայի մյուս շարժումների, Լիգուրականը գովերգում է աշխարհաքաղաքացիությունը՝ Ջենովայի Չանրապետության փառավոր ժառանգությունը:

Անջատողական շարժումներ կան Սարդինիայում եւ Սիցիլիայում, բայց նրանք տեղական ընտրողների ձայների 2-3 տոկոսից ավելին չեն հավաքում:

Տարածաշրջանային շարժումներ կան նաեւ Վալ դ'Աոստում, ուր մեծամասնությունը խոսում է ֆրանկո-պրովանսերեն (արպիտաներեն) լեզվով, եւ Ֆրիուլի-Վենետիկ-Ջուլիայում, որտեղ մի քանի սահմանամերձ գյուղեր խոսում են սլովեներենով:

Ի վերջո, չնայած Երկրորդ աշխարհամարտում կրած պարտությանը, դեռ ապրում է իտալական իռեդենտիզմը՝ Իտալիային բոլոր այն հողերի վերամիավորման ձգտումը, որոնք այսպես թե այնպես կապված են իտալական պատմությանն ու մշակույթին: Իտալիայի խոշոր պետական պաշտոնյաների եւ կուսակցական առաջնորդների ելույթներում հաճախ են սպրդում ակնարկներ, թե Իստրիան, ինչպես նաեւ Դալմացիան եւ Կորսիկան բնիկ իտալական հողեր են:

* * *

Իսպանիայում բասկերի շարժումն իր թափով գերազանցում է Իտալիայի ցանկացած անջատողական գործունեությանը: Բասկյան անջատողականության սպեկտրը շատ լայն է, որը միավորում է ծայրահեղ աջից մինչև ծայրահեղ ձախ քաղաքական ուժերը: Այն կապված է պատմության հետ:

19-րդ դարում Իսպանիայում պայքար էր գնում կառլականների (աբսոլյուտիստների) եւ ազատականների միջև: Քանի որ ազատականները ձգտում էին երկրի ունիֆորմացման, տարօրինակ կերպով այնպես ստացվեց, որ հենց աբսոլյուտիստները պաշտպանեցին բասկերի, Կատալոնիայի եւ Իսպանիայի այլ երկրամասերի հիմնավորց արտոնությունները: Ուստի բասկերը պաշտպանեցին կառլականներին, ու երբ կառլիզմն անհետացավ (դա տեղի ունեցավ միայն 20-րդ դարում), բասկյան ազգային շարժման աջ թեւը նրանից ժառանգեց կաթոլիկ հոգեւորականության հետ սերտ կապերը: Բասկյան քաղաքական սպեկտրի ձախ թեւն առաջացավ այն քաղաքներում, որոնք 20-րդ դարի սկզբին դարձան արդյունաբերական կենտրոններ (առաջին հերթին՝ Բիլբաոյում): Հենց իրենց ձախ թեւի շնորհիվ բասկ ազգայնականները Քաղաքացիական պատերազմում հանդես եկան Հանրապետության կողմից: Իսկ 50-ական թվականներին ստեղծվեց բասկյան ԷՏԱ ահաբեկչական կազմակերպությունը, որի գործունեության արդյունքում զոհվել է 800-ից ավելի մարդ:

Բասկերի երկիրն ինքնավարություն ստացավ սուկ 1978թ., Ֆրանկոյի մահից հետո: Այդ ինքնավարությունը շատ լայն է. օրինակ՝ Բասկերի երկիրն ունի սեփական ոստիկանական ուժեր: Սակայն նրանց մեջ այնքան մեծ է ահաբեկիչներին համակրողների տոկոսը, որ Իսպանիայի ՆԳ նախարարությունը նրանց Ինտերպոլի տվյալների բազային մոտ չի թողնում: Ներկայումս ԷՏԱ-ն, ինչպես եւ մյուս անօրինական կազմակերպությունները, շարունակում են գործել: Բասկ ազգայնականների այցեքարտը քաղաքային անկարգություններն են՝ ցուցափեղկերի փշրմամբ, մեքենաների հրկիզմամբ եւ ոստիկանների վրա հարձակմամբ: Գոյություն ունեն նաեւ բազմաթիվ կազմակերպություններ, որոնք պահպանում են հավասարակշռությունն օրինականության եւ անօրինականության սահմանագծին: Նրանց մի մասը (օրինակ՝ «Բատասունա»-ն) արգելվել է, քանզի ընկալվում է որպես ԷՏԱ-ի լեգալ թեւ:

Իսպանիայում, որտեղ «արյան մաքրությունը» շատ կարելի էր հասկացություն է, բասկերը, որ համարվում են Եվրոպայի մինչհնդեվրոպական

բնակչության հետնորդներ, ինքնաբերաբար ստացվում են «ամենագտարյունները»:

Բասկերի երկրից բացի, նրանք հավակնում են նաև Նավարային ու ֆրանսիական երկու դեպարտամենտներին: Սակայն Նավարայում նրանք կազմում են բնակչության մեկ երրորդից ոչ ավելին, իսկ բասկյան կուսակցությունը մարզում հավաքել է 23 տոկոս:

Բասկ անջատողականները տարբեր կերպ ընկալեցին կոսովյան անկախությունը: Եթե աջերը ցնծությամբ պաշտպանեցին կոսովցիներին, ապա ձախերը Կոսովոյի ճանաչումը խարանեցին որպես կեղծ եւ ֆաշիստական:

Կատալոնիայում այս հարցում առավել համերաշխություն էր տիրում: Կատալոնյան կառավարությունը միահամուռ պաշտպանեց Կոսովոյի անկախությունը եւ Իսպանիայից պահանջեց ճանաչել այն:

Ներկայումս Կատալոնիան Իսպանիայի ամենագարգացած երկրամասն է, ինչը լրացուցիչ կերպով ազդում է անկախության գաղափարի ժողովրդականության վրա, որը կիսում է բնակչության շուրջ մեկ երրորդը: Կատալոններեն լեզուն իսպաներենը հետզհետե մղում է հետին պլան: Սակայն կատալոնյան շարժումն անհամեմատ ավելի խաղաղ է, քան բասկյանը. կատալոնյան ահաբեկչական կազմակերպություններ այսօր չկան:

Կատալոնյան շարժումն իր արմատներով ձգվում է մինչև միջնադար: Ներկայումս փոխվում են գիտական ուսմունքները՝ գրվում են նոր ծանրակշիռ աշխատություններ, որտեղ ամբողջովին վերանայվում է Պիրենեյան թերակղզու պատմությունը: Կատալոնյան քաղաքակրթությունը դիտվում է որպես իրավահավասար կաստիլյանին, բայց կեղեքված բռնակալ հարեւանների կողմից: Մենագրություններում խոսքը Վալենսիայից մինչև Սիցիլիա կատալոնյան աղեղի մասին է: Սակայն կատալոնցի ազգայնականները չեն հավակնում այդ բոլոր հողերին: Նրանց պահանջները տարածվում են «Կատալոնյան երկրների»՝ բուն Կատալոնիայի հողերի, Վալենսիայի, Արագոնի որոշ սահմանային շրջանների, որտեղ խոսում են կատալոներեն, Յուլսիսային Կատալոնիայի (այսինքն՝ Ֆրանսիական Ռուսիլոնի), ինչպես նաև Բալեարյան կղզիների եւ Սարդինիայի Ալգեր քաղաքի վրա, ուր մինչ այժմ խոսում են կատալոնյան բարբառով:

«Կատալոնյան երկրներում» այս գաղափարները տարբեր կերպ են ընկալվում: Եթե Բալեարյան կղզիներում դրանք, հիմնականում, ընդունվում են (թեև 70-ական թվականներին գոյություն ուներ շարժում, որը Բալեարյան կղզիների անկախության կոչ էր անում), ապա Վալենսիայում կատալոնյան նկրտումները վրդովմունք են առաջացնում:

Իսպանիայում այլ լուրջ անջատողական շարժումներ չկան, իսկ ահա ինքնավարականներ գործնականում կան յուրաքանչյուր տարածաշրջանում:

Դրանցից ամենաեականն, անշուշտ, գալիսիականն է: Այն նրանով է հետաքրքիր, որ հավակնում է կելտական աշխարհի հետ ծագումնաբանական ազգակցությանը՝ առավել հետեւողականորեն, քան Պաղանիան: Չնայած նրան, որ գալիսիացիները խոսում են ռոմաներենով, նրանք մասնակցում են կելտական մշակույթին նվիրված բոլոր ցույցերին: Ակտիվորեն զարգանում են գալիսերեն լեզուն ու գալիսիական ինքնագիտակցությունը: Շատերը հանգում են այն եզրակացության, որ հյուսիսային պորտուգալացիներն իրենց ավելի մոտ են, քան իսպանացիները: Իրոք, Յյուսիսային Պորտուգալիայի, ինչպես եւ գալիսիական մշակույթը համահունչ են կելտական աշխարհին: Միաժամանակ, Իսպանիայից անջատման օգտին հանդես է գալիս գալիսիացիների մեկ տոկոսից ոչ ավելին:

Տարածաշրջանային շարժումներն Արագոնում եւ Աստուրիայում հանգում են կրկին իրենց բարբառներով խոսելու եւ մշակութային առումով սեփական առանձնահատկությունը գիտակցելու փորձերին: Կաստիլյան հինգ շրջաններում (Կանտաբրիա, Կաստիլիա եւ Լեոն, Մադրիդ, Լա Ռիոհա եւ Կաստիլիա լա Մանչա) աճում է Մեծ Կաստիլիայի մեջ նրանց միավորման շարժումը, որը կարող է կազմել Իսպանիայի միատարր կորիզը: Լեոնում նույնիսկ առկա են անջատողական շարժումներ, որոնք միջնադարյան Լեոնի Թագավորության հողերի միավորման (Լեոնի մարզին Սամորայի, Սալամանկայի եւ անգամ պորտուգալական Բրագանցայի նահանգի միացման) կոչ են անում: Սակայն Աստուրիային լեոնական անջատողականները չեն հավակնում, թեւս այն նույնպես մտել է Լեոնի Թագավորության մեջ, քանզի նախընտրում են չգժտվել աստուրիացիների հետ:

Չզոր ինքնավարական շարժում կա Անդալուսիայում, որտեղ Բասկերի երկրի ու Կատալոնիայի ինքնավարության ճանաչումը զանգվածային փողոցային բողոքներ եւ ցույցեր առաջացրեց, որոնք, վերջիվերջո, հանգեցրին Անդալուսիայի ինքնավարության ճանաչման: Սակայն անկախության համար լուրջ շարժում Անդալուսիայում չկա:

70-ական թվականների վերջին նկատելի անջատողական շարժում կար Կանարյան կղզիներում, որը սատարվում էր Ալժիրից եւ հիմնված էր բերբերյան միասնության գաղափարների վրա (Կանարյան կղզիների բնակչության մեծամասնությունը էթնիկ բերբերներ են): Բայց վերջին 20 տարիներին այս շարժումը տեղի բնակչության կողմից ոչ մի աջակցություն չի վայելում:

Իսպանիան հավակնում է Ջիբրալթարին, որը 18-րդ դարից պատկանում է Մեծ Բրիտանիային: Սակայն ջիբրալթարցիների մեծամասնությունը (90 տոկոսից ավելին) մերժում է ոչ միայն Ջիբրալթարի հանձնումը Իսպանիային, այլև նույնիսկ այդ վիճելի տարածքի վրա անգլո-իսպանական համատեղ սյուզերենությունը: Իր հերթին, Մարոկկոն հավակնում է իսպանական Սեուտա եւ Մելիլյա անկլավներին, որոնք նույնպես նախընտրում են մնալ իսպանական իշխանության ներքո: Վերջապես, գոյություն ունի չլուծված հակամարտություն Իսպանիայի ու Պորտուգալիայի միջև՝ Օլիվենս քաղաքի պատճառով, որը նապոլեոնյան պատերազմների շրջանում գրավվել էր իսպանացիների կողմից: Այնուամենայնիվ, եվրամիություն եւ Շենգենյան տարածություն երկու պետությունների մուտք գործելու պահից ի վեր Օլիվենսի պատկանելության հարցը կորցրել է անցյալի արդիականությունը:

* * *

Ֆրանսիայում անջատողականության խնդիրն ավելի քիչ սրությամբ է դրված, քան Իտալիայում կամ Իսպանիայում:

Կոչտ ունիտար պետության երկար տարիներն իրենց գործն արեցին. Ֆրանսիայի բնակչությունն ամենատարբեր ժողովուրդների խառնակույտից վերածվեց ֆրանսիացիների, որոնց միավորում են ընդհանուր լեզուն եւ մշակույթը: Այնուամենայնիվ, վերջին 50 տարում Ֆրանսիայի շատ շրջաններում հասունացան ինքնավարական շարժումներ:

Նկատելի անջատողական շարժմամբ միակ մարզը Ֆրանսիայում Կորսիկան է: Կղզում անկախության կողմնակիցները հարգում են Պաուլիի՝ առաջին ժամանակակից ժողովրդավարական պետության հիմնադրի հիշատակը, իսկ ֆրանսիական իշխանությունն ընկալում են որպես գաղութային:

Սակայն բնավ ոչ բոլոր կորսիկացիներն են անկախություն ցանկանում, իսկ ովքեր այն ուզում են, ծվատվել են կոնֆլիկտներից: Կղզու բնակչության մեծ մասը պատրաստ է բավարարվել լայն ինքնավարությամբ, կորսիկերեն լեզվի առանձին իրավունքներով եւ մի շարք ազգային հարկերից ազատմամբ: Ահաբեկչական սպառնալիք կա. կորսիկացիները հարձակվում են վարչական, ռազմական ու զբոսաշրջության օբյեկտների վրա, որոնք ներկայացնում են ֆրանսիական իշխանության խորհրդանիշները: Բայց հարձակումներն ուղղված են շենքերի, այլ ոչ թե մարդկանց դեմ:

Ֆրանսիայում, ինչպես եւ Իսպանիայում, գործում են բասկյան (Բայոնա, Անգլե եւ Բիարից քաղաքների շրջանում) եւ կատալոնյան

(Ռուսիլյոնում կամ Յուրիսային Կատալոնիայում) կազմակերպություններ: Որպես կանոն, բասկերը կենտրոնացել են Իսպանիայի դեմ պատերազմի վրա՝ ֆրանսիական հողերն օգտագործելով որպես նահանջի հենակայաններ: Այնուամենայնիվ, 70–80-ական թվականներին Ֆրանսիայում գործում էր բասկյան ահաբեկչական կազմակերպություն: Ռուսիլյոնում կատալոնյան շարժումը գրեթե անկատելի է. տեղի բնակչությունը գործնականում կորցրել է իր ավանդույթները եւ ուժացվել:

Ֆրանսիայի մնացած տարածաշրջանային շարժումներից ամենահզորը բրետոնյանն է: Բրետանն առավելագույնս է օգտագործում իր պատկանելությունը կելտական աշխարհին, որպեսզի ցույց տա իր տարբերությունը ֆրանսիացիներից: Բրետանում ամենապաշտելի հերոսուհին դքսուհի Աննա Բրետոնացին է, որն ամեն ինչ արել է, որպեսզի բրետոնները պահպանեն իրենց անկախությունը Ֆրանսիայից: Բրետոններեն լեզվի հետ կապված են բազմաթիվ մշակութային միջոցառումներ, այն սովորեցնում են դպրոցում, այդ լեզվով երգչախմբեր են երգում:

Բրետանում անկախության կողմնակիցները բացարձակ փոքրամասնություն են: Գաղափարը, թե Բրետանը կարող է անկախանալ, թվում է այնքան անհավանական, որ բրետոն մեծամասնությանը դուր է գալիս նրա հետ «խաղալ»: Բրետոնների հիմնական պահանջը Բրետանին նրա պատմական մայրաքաղաքի՝ Նանտի վերամիավորումն է, որն այժմ գտնվում է Լուար Ատլանտիկի դեպարտամենտում: Նանտում բրետոնները փոքրամասնություն են, սակայն ոչ մի տեղ Բրետանում չես տեսնի այնքան անզուսպ հակաֆրանսիական կարգախոսներ, որքան այնտեղ:

Ինչպես եւ բասկերի դեպքում, լինում են ցանկացած հանդգնունքի բրետոն ազգայնականներ՝ ծայրահեղ ձախերից (ենգանականներ. մոտ են անարխիստներին) մինչեւ ծայրահեղ աջեր (ադսավականներ. պահանջում են Եվրոպայից ներգաղթյալների վտարում): Բրետոնները վաղուց կապեր են պահպանում բասկերի հետ, եւ ժամանակին էՏԱ-ն օգնել է ահաբեկչական խմբի՝ Բրետոնական հեղափոխական բանակի կազմակերպմանը: Սակայն բրետոն ահաբեկիչների հաշվին մահափորձեր քիչ կան, զոհեր գրեթե չկան:

Ֆրանսիայի հարավում, 19-րդ դարի երկրորդ կեսին, ծնվեց օքսիտանական հզոր շարժումը՝ հենված պրովանսերեն լեզվի վրա, որը գրական էր դարձել դեռեւս տրուբադուրների ժամանակաշրջանում: Սակայն Օքսիտանիան, որը պոտենցիալ կերպով կարող էր դառնալ «ֆրանսիական Ուկրաինա», այդպես էլ չկայացավ: Այժմ նրանից ոչինչ չի մնացել, բացի մշակութային առանձնահատկության գիտակցումից եւ ֆրանսերեն լեզվի յուրահատուկ ակցենտից: Օքսիտանիայի միակ

հատվածը, ուր գոյություն ունի անջատողական շարժում՝ Նիցցան է, որը Ֆրանսիայի կազմի մեջ է մտել 1860թ.՝ Սարդինիայի Թագավորության հետ պայմանագրի համաձայն: Անկախության կողմնակիցները պնդում են, որ Նիցցայից կարող է ստացվել երկրորդ Մոնակո եւ մատնանշում, որ պայմանագիրն, ըստ որի՝ Նիցցան գտնվում է Ֆրանսիայի կազմում, բազմիցս խախտվել է, իսկ 1940թ. ընդհանրապես չեղյալ է հայտարարվել:

Եվս մեկ նկատելի անջատողական շարժում գործում է Սավոյայում: «Նիցցայի անկախության շարժանը» համանման այս շարժումն սկսվեց Սավոյան ու Նիցցան Ֆրանսիային միացնելու 100-ամյա հոբելյանի տոնակատարություններից շատ չանցած: Փոքրիկ «Սավոյայի սավոյցիների ակումբը» հետզհետե աճեց «Սավոյական լիգայի», որը «Եվրոպական ազատ դաշինքի» անդամ է:

Էլզասում, չնայած չափազանց ուժեղ տարածաշրջանային ինքնությանը, անջատողական շարժում չկա: Երկրամասի պատմությունն իր դերը խաղացել է՝ Ֆրանսիայից անկախության ձգտումը վերածվել է բացարձակ տաբուի: Էլզասում կա բավական խոշոր տարածաշրջանային կուսակցություն՝ «Ամենից առաջ Էլզասը» եւ նրան հարող «Երիտասարդ Էլզաս» երիտասարդական շարժումը, որն ունի կապեր Ֆլանդրիայի ու Պաղանիայի երիտասարդական ազգայնական շարժումների հետ: Սակայն այդ կուսակցությունների գործիչները չեն էլ մտածում կասկածի ենթարկել, թե իրենք Ֆրանսիացի են: Դրանք ծայրահեղ աջ շարժումներ են, որոնք կտրուկ հանդես են գալիս իրենց ինքնության (որը նրանք սահմանում են որպես երկակի՝ ֆրանսիական եւ էլզասական) կորստի դեմ. ինքնություն, որին, իրենց տեսանկյունից, սպառնում են Երրորդ աշխարհի երկրներից ներգաղթյալները:

Եվս մեկ տարածաշրջան, որի պատկանելությունը Ֆլանդրիայի անկախության ձեռքբերման դեպքում կարող է կասկածի ենթարկվել Զարավային Ֆլանդրիան է (Լիլ, Դուե եւ Դյունկերք քաղաքների շրջանը): Բայց մինչ ֆլամանդական անկախության նվաճումը, այդ հարցը հաստատ չի ծառանա:

apn.ru

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ. ՍՊՈՐՏ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օլիմպիադաները եւ «մեծ քաղաքականությունը» եղել ու մնում են միմյանց սերտ փոխկապակցված: Մենք կբերենք առավել հայտնի օրինակներ, թե ինչպես օլիմպիական խաղերը, որոնք կոչված են խորհրդանշելու աշխարհի ժողովուրդների եղբայրությունը եւ ազնիվ մարզական պայքարը, դարձել են քաղաքականության ու քարոզչության գոհ:

1908թ., Մեծ Բրիտանիա, Լոնդոն: Պատմության մեջ առաջին անգամ բացման արարողությանը պատվիրակություններն անցան իրենց ազգային դրոշների ներքո: Ֆինլանդիայի (այն ժամանակ նա մտնում էր Ռուսական կայսրության կազմի մեջ) հավաքականը Ռուսաստանից ֆիննական դրոշի ներքո քայլելու մերժում ստացավ: Ուստի, որպես բողոքի նշան, նա քայլեց բուլղոսկին առանց դրոշի: Հետաքրքրական է, որ արդյունքում ֆին մարզիկները նվաճեցին հինգ մեդալ, իսկ Ռուսական կայսրության թիմը՝ միայն երեք:

1920թ., Բելգիա, Անտվերպեն: Այս խաղերը սկսվեցին Առաջին աշխարհամարտի (որի ընթացքում Բելգիան օկուպացվեց գերմանական զորքերի կողմից) ավարտից մոտ երկու տարի անց: Այդ օլիմպիադային մասնակցում էր 29 պետություն. ընդ որում, կազմակերպիչները հրավերք չէին ուղարկել այն երկրներին, որոնք պարտվել էին պատերազմում՝ Գերմանիային, Ավստրիային, Բուլղարիային, Հունգարիային եւ Թուրքիային:

Հենց այդ խաղերին առաջին անգամ ներկայացվեց օլիմպիական դրոշը (հինգ միահյուսված բազմերանգ օղակներ, որոնք, ըստ տարբեր մեկնաբանությունների, խորհրդանշում են կանաչ հինգ մայրցամաքները, կանաչ աշխարհի բոլոր պետությունների դրոշների գույները) եւ օլիմպիական երգումը («Ողջ մարզիկների անունից ես խոստանում եմ, որ մենք կմասնակցենք այս օլիմպիական խաղերին՝ հարգելով ու պահպանելով կանոնները, որոնցով նրանք անցկացվում են, իսկական մարզական ոգով, ի փառս սպորտի եւ հանուն մեր թիմերի պատվի»):

1928թ., Նիդեռլանդներ, Ամստերդամ: Գերմանիան, 10-ամյա փորձաշրջան անցնելուց հետո (իբրև Առաջին աշխարհամարտի նախածեռնող), օլիմպիական խաղերին մասնակցելու հրավերը ստացավ: Ուշագրավ է, որ Ավստրիան ավելի փոքր պատիժ էր ստացել. նա բաց թողեց միայն մեկ օլիմպիադա (1920թ.): Նման խտրականության պատճառը մերկ քաղաքականությունն էր. 1924թ. օլիմպիադան անցկացվեց Փարիզում, եւ Ֆրանսիան օգտագործեց իր ողջ ազդեցությունը Միջազգային օլիմպիական կոմիտեում (ՄՕԿ), որպեսզի արգելափակի գլխավոր ախոյանի՝ Գերմանիայի հրավերը: Ի դեպ, Ամստերդամում Գերմանիան ստացած մեդալների քանակով գրավեց երկրորդ տեղը:

1936թ., Գերմանիա, Բեռլին: Բեռլինն օլիմպիադայի անցկացման վայր ընտրվեց 1931թ.՝ նացիստների իշխանության գալուց երկու տարի առաջ: Հիտլերն օլիմպիադային վիթխարի նշանակություն էր տալիս: Այն պետք է համախմբեր գերմանական ժողովրդին եւ աշխարհին ցուցադրեր նացիոնալ-սոցիալիզմի նվաճումները: Ուստի, խաղերի նախապատրաստման նպատակով հատկացվեցին այն ժամանակների համար հսկայական միջոցներ, որոշակի մեղմացումներ մտցվեցին հրեաների (բեռլինյան փողոցներից հանվեցին հակահրեական կարգախոսներն ու հայտարարությունները) եւ ոչ ավանդական սեռական կողմնորոշմամբ արտասահմանցիների (համասեռամուլ գերմանացիներին ուստիականությունը շարունակում էր անխնա հետապնդել) նկատմամբ: Միեւնույն ժամանակ, էթնիկ հրեաներին Գերմանիայի թիմի կազմում չընդգրկեցին, իսկ բեռլինյան գնչուներին խաղերի մեկնարկից առաջ ձերբակալեցին եւ տեղավորեցին համակենտրոնացման ճամբարում:

Բեռլինյան օլիմպիադայի նախաշեմին առաջին անգամ անցկացվեցին բանավեճեր, թե արժե, արդյոք, խառնել սպորտն ու քաղաքականությունը: Բոյկոտի կողմնակիցներն ապացուցում էին, որ իրենց երկրների մասնակցությունը սոսկ կամրապնդի նացիստական վարչակարգը, հակառակորդները՝ թե մարզիկները չպետք է տառապեն քաղաքական գործիչների զործողություններից եւ որ օլիմպիադան վկայում է, թե Գերմանիան վերադարձել է «խաղաղ ժողովուրդների ընտանիք» (թեեւ այդ ժամանակ գերմանական զորքերը գրավել էին Ռեյնի ապառազականացված շրջանը, իսկ Ղահաու համակենտրոնացման ճամբարում պահվում էր մի քանի հազար կալանավոր): Հետաքրքրական է, որ աֆրոամերիկացիների մեծամասնությունն, ընդհանուր առմամբ, պաշտպանում էր խաղերը՝ գտնելով, որ այնտեղ սեւամորթ մարզիկները կցուցադրեն, թե ոչնչով չեն զիջում սպիտակամորթներին (ինչպես հայտնի է,

խաղերի հերոս դարձավ ԱՄՆ սեւամորթ թեթեւատլետ Ջեսի Օուենսը՝ նվաճելով չորս ոսկե մեդալ: Հետագայում նա ասում էր, որ երբեք նման բուռն ծափահարության չի արժանացել, ինչպես Բեռլինում): Հակա-ֆաշիստներն ատլետներին կոչ էին անում չմեկնել Գերմանիա եւ անգամ փորձեցին Բարսելոնում անցկացնել այլընտրանքային խաղեր: Բայց դա իրականացնել չհաջողվեց՝ Իսպանիայում քաղաքացիական պատերազմի սկսման պատճառով:

Բեռլինի օլիմպիական խաղերը կազմակերպվեցին շշմեցուցիչ թափով ու հանդիսավորությամբ. մինչ այդ, այս մրցումները չափազանց համեստ իրադարձություն էին: Պատմության մեջ առաջին անգամ օլիմպիական կրակը վառվեց պատմական Օլիմպոսում եւ հասցվեց Գերմանիա, նաեւ առաջին անգամ կազմակերպվեց մրցումների հեռուստահեռարձակումը: Արդյունքում՝ մեդալների քանակով բացարձակ հաղթող ճանաչվեց Գերմանիան՝ ստանալով ավելի շատ պարգև, քան մնացած երկրները միասին վերցրած: Իտալիայի հավաքականը հաղթեց ֆուտբոլում: Այս երկու իրողություններն առավելագույնս օգտագործվեցին նացիստական Գերմանիայի ու ֆաշիստական Իտալիայի կողմից: 1938թ. կայացավ «Օլիմպիա» կինոնկարի շնորհամուտը, որը նկարահանել էր Հիտլերի սիրելի ռեժիսոր Լենի Ռիֆենշտալը: Կինոնկարում ցուցադրվում էին 100 հազար հանդիսական տեղավորող բեռլինյան վիթխարի մարզադաշտը, հիասքանչ օլիմպիական ավանը (շուրջ 500 շենք), գեղեցիկ եւ ամրակազմ գերմանական երիտասարդությունը... Հիտլերն անձամբ էր կարգադրել, որպեսզի կինոնկարի վերջնական տարբերակից հանվեն սեւամորթ մարզիկների հաջողությունները ցուցադրող կադրերը:

1940թ., Ճապոնիա, Տոկիո: Այս խաղերը չկայացան: Ճապոնիան ինքը հրաժարվեց անցկացնել այդ մրցումները՝ Չինաստանում պատերազմի պատճառով (այն 1937թ. նախաձեռնել էր ինքը՝ Ճապոնիան): Խաղերը փորձեցին անցկացնել Հելսինկիում (Ֆինլանդիա), բայց դրանք եւս տապալվեցին՝ այս անգամ խորհրդային ներխուժման (1939-1940թթ.) ու Երկրորդ աշխարհամարտի (1939թ.) սկսման պատճառով: Նմանատիպ ճակատագրի են արժանացել 1916 եւ 1944 թվականների ամառային օլիմպիադաներն ու 1940 եւ 1944 թվականների ձմեռային խաղերը:

1948թ., Մեծ Բրիտանիա, Լոնդոն: Առաջին հետպատերազմյան խաղերին չիրավիրվեցին Գերմանիան ու Ճապոնիան, որոնք սանձա-զերծել էին Երկրորդ աշխարհամարտը: Սակայն Իտալիային, որն «Առանցքի» տերություններից էր, թույլատրվեց մասնակցել խաղերին: Իր

հերթին, օլիմպիադային մասնակցելուց հրաժարվեց Խորհրդային Միությունը: ԽՍՀՄ մերժումն անսպասելի չէր (վերջին օլիմպիադան, որին մասնակցել էր Ռուսական կայսրության թիմը, 1912թ. Ստոկհոլմի օլիմպիադան էր), սակայն ժամանակակիցներից ոմանք մատնանշում էին, որ այդ մերժումը հիմնավորված էր հակահիտլերյան կոալիցիայի նախկին դաշնակիցների հետ հարաբերությունների սառեցմամբ եւ, մասնավորապես, ամերիկյան Ֆուլտոն քաղաքում Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ուինսթոն Չերչիլի նշանավոր ճառով, ինչն այժմ շատ պատմաբաններ համարում են սառը պատերազմի սկիզբ:

Օլիմպիադան նշանավորվեց եւս մեկ ցուցադրական իրադարձությամբ. ոսկե մեդալ նվաճած չեխ մարմնամարզուհին հրաժարվեց վերադառնալ հայրենիք՝ պնդելով, որ կոմունիստների իշխանության գալուց հետո Չեխոսլովակիայում վերացել է քաղաքական ազատությունը:

1952թ., Ֆինլանդիա, Յելսինկի: Առաջին անգամ օլիմպիադային մասնակցեցին ԽՍՀՄ մարզիկները: Սակայն քաղաքականությունն ազդեց նաեւ այս խաղերի վրա: Գերմանիայի հավաքականը կազմվել էր բացառապես ԳՖՅ մարզիկներից. ԳԴՅ նրանց մարզընկերներն այդ թիմի մեջ չէին ընդգրկվել: Մինչեւ 1964 թվականը օլիմպիադաներն անտեսում էին քաղաքական իրողությունը՝ երկու գերմանական պետության գոյությունը, ուստի ԳԴՅ ու ԳՖՅ մարզիկները հանդես էին գալիս մեկ թիմում, ինչը հանգեցնում էր բազում խնդիրների:

Այն բանից հետո, երբ ՄՕԿ ընդունվեց Թայվանը, Չինաստանի թիմը հրաժարվեց գալ Յելսինկի: Չինաստանը օլիմպիադա վերադարձավ սոսկ 1980թ. (Լեյք Փլեսիդի օլիմպիադային, ԱՄՆ):

1956թ., Ավստրալիա, Մելբուռն: Նիդեռլանդները, Իսպանիան ու Շվեյցարիան հրաժարվեցին մասնակցել խաղերին՝ ի նշան բողոքի խորհրդային զորքերի կողմից Յունգարիայի ապստամբության ճնշման: Մելբուռն ժամանած հունգարական թիմը հրաժարվեց հանդես գալ Յունգարիայի ժողովրդական Յանրապետության դրոշի ներքո եւ բարձրացրեց 1918թ. Յունգարիայի պետական դրոշը: Խաղերի հոգեբանական գազաթնակետը եղավ ջրագնդակի կիսաեզրափակիչ մրցախաղը խորհրդային ու հունգարական թիմերի միջեւ, որը պատմության մեջ մտավ «արյուն ջրի մեջ» բնորոշիչ անվամբ (հունգարացիները հաղթեցին 4:0 հաշվով եւ արդյունքում ստացան ոսկե մեդալները): Խաղերի ավարտից հետո հունգարացի շատ մարզիկներ հրաժարվեցին վերադառնալ հայրենիք:

Կամբոջան, Եգիպտոսը, Իրաքը եւ Լիբանանը նույնպես օլիմպիադային չմասնակցեցին՝ այդպես արտահայտելով իրենց բողոքը Սուեզի ճգնաժամի դեմ (Իսրայելի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի զորքերը ներխուժել էին Եգիպտոս):

1964թ., ճապոնիա, Տոկիո: ՄՕԿ-ը Հարավաֆրիկյան Հանրապետությանը (ՀԱՀ) արգելեց մասնակցել խաղերին այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկիրն իրականացնում է ռասայական խտրականության քաղաքականություն: ՀԱՀ հավաքականն օլիմպիական ասպարեզ վերադարձավ միայն 1992թ.՝ ապարտեիդի վարչակարգի անկումից հետո:

1968թ., Մեքսիկա, Մեխիկո: Առաջին անգամ օլիմպիական խաղերի անցկացման իրավունք ստացավ Երրորդ աշխարհի երկիր: Մրցումների մեկնարկից 10 օր առաջ մեքսիկացի զինվորականները Մեխիկոյում գնդակահարեցին շուրջ 300 ցուցարարի: Մեքսիկացի ուսանողները փորձում էին բողոքել Լատինական Ամերիկայում ԱՄՆ քաղաքականության դեմ, իսկ Մեքսիկայի կառավարությունը մտահոգված էր երկրի միջազգային վարկանիշով, ուստի մայրաքաղաք զորքեր մտցրեց, որոնք վերահսկողության տակ վերցրին մի քանի բուհերի տարածքները: Ուսանողներն ընդվզեցին, նրանց պաշտպանեցին արհմիությունները, եւ արդյունքը եղավ ցույցի գնդակոծումը: Սակայն «օլիմպիական» գծով ոչ մի պատժամիջոց չհետեւեց. ՄՕԿ-ը հայտարարեց, թե դա Մեքսիկայի ներքին գործն է եւ տվյալ միջադեպը չպետք է ազդի օլիմպիադայի վրա:

Օլիմպիադային երկու սեւամորթ ամերիկացի մարզիկներ 200մ վազքի մրցույթում գրավեցին 1-ին եւ 3-րդ տեղերը: Պատվո պատվանդանին նրանք սեղմած բռունցքներով ձեռքերը վեր նետեցին. դա բոլորին հասկանալի «սեւ ուժի» խորհրդանիշն էր: Այդ ժամանակ ԱՄՆ-ում սեւամորթների՝ իրենց քաղաքացիական իրավունքների համար պայքարի գագաթնակետն էր, եւ հենց 1968թ. սպանվեց Մարտին Լյութեր Քինգը, որը գլխավորում էր այդ պայքարը: ԱՄՆ սեւամորթ համայնքը երկմտում էր՝ արժե՞, արդյոք, որ իր ներկայացուցիչները մասնակցեն օլիմպիադային: Վերջիվերջո, աֆրոամերիկացիները մեկնեցին խաղերին, քանզի որոշեցին, որ այդ մրցումները բողոքի իրենց գործողությունների նկատմամբ առավելագույն ուշադրություն գրավելու եզակի հնարավորություն են ընձեռում: Տվյալ դեպքում ՄՕԿ-ը օպերատիվ արձագանքեց. նա պահանջեց, որպեսզի մեղալակիրներն անհապաղ լքեն Մեքսիկան՝ սպառնալով հակառակ դեպքում մրցումներից հեռացնել ԱՄՆ հավաքականի մյուս անդամներին: ՄՕԿ-ի այդ պահանջը կատարվեց:

1976թ., Կանադա, Մոնրեալ: 30 պետություն (հիմնականում՝ աֆրիկյան, որոնց առաջատարներն էին Տանզանիան ու Կոնգոն) ՄՕԿ-ից պահանջեցին Մոնրեալի խաղերին չթույլատրել Նոր Զելանդիայի թիմին (այն բանից հետո, երբ ռեգբիի նորզելանդական ազգային հավաքականն այցելեց ՂԱՂ): Արդյունքում՝ այդ երկրները (բացի Աֆրիկայի երկրներից, բոլորտին մասնակցում էին նաև Իրաքը եւ Գայանան) հրաժարվեցին իրենց մարզիկներին ուղարկել Կանադա:

Խաղերը հաշվի չառան նաև Թայվանի թիմին: Բանն այն է, որ Կանադան առաջարկեց Թայվանին հրաժարվել «Չինաստանի Հանրապետություն» ինքնանունից: Թայվանը մերժեց՝ չնայած իրեն առաջարկել էին պահպանել սեփական դրոշը եւ օրհներգը:

1980թ., ԱՄՆ, Լեյք Փլեսիդ: Այդ ձմեռային խաղերին առաջին անգամ մասնակցեց Չինաստանի հավաքականը: ՄՕԿ-ը փորձում էր Թայվանին համոզել հանդես գալ «Չինական Թայվան» անվան տակ, բայց նա մերժեց եւ բոլորտեց օլիմպիադան:

1980թ., ԽՍՀՄ, Մոսկվա: 65 պետություններ, ներառյալ մարզական այնպիսի գերտերություններ, ինչպես ԱՄՆ-ը, Գերմանիան ու Ճապոնիան, հրաժարվեցին մասնակցել օլիմպիադային՝ որպես բողոքի նշան խորհրդային զորքերն Աֆղանստան մտցնելուն (1979թ.): Սկզբում ԱՄՆ նախագահ Ջիմի Քարթերն օլիմպիադան այլ քաղաք տեղափոխելու խնդրանքով դիմեց ՄՕԿ-ին, սակայն մերժվեց: Դրանից հետո ԱՄՆ-ը եւ իր դաշնակիցներն սկսեցին ՄՕԿ-ին շրջանցելով գործել: ԱՄՆ վարչակազմը գտնում էր, թե ԽՍՀՄ-ը, որն օլիմպիադայի անցկացմանը վիթխարի նշանակություն էր տալիս, այդ գործողություններից լրջորեն կտուժի: Իրականում, բոլորտին մասնակցող պետությունների մի շարք մարզական պատվիրակություններ, այնուամենայնիվ, ժամանեցին Մոսկվա: Օրինակ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Իսպանիայի կառավարություններն իրենց օլիմպիական կոմիտեներին թույլատրեցին ինքնուրույն որոշել օլիմպիադային մասնակցության հարցը: Դժվար է ասել՝ իրականում քանի երկիր միացավ բոլորտին. տարբեր աղբյուրներ խոսում են 45-50 երկրի մասին, ընդ որում, նշվում է, թե որոշ հավաքականներ ԽՍՀՄ չհասան զուտ ֆինանսական պատճառներով, իսկ ոմանք էլ (օրինակ՝ Իրանը) ՄՕԿ-ից հրավերք չէին ստացել:

Ամեն դեպքում, Մոսկվա ժամանեց միայն 81 հավաքական. դա 1956թ. ի վեր մասնակցության ամենացածր մակարդակն էր: Քաղաքական բողոքները շարունակվեցին եւ օլիմպիադայի ժամանակ: Օրինակ, 15

հավաքականներ բացման հանդիսավոր արարողությանը քայլեցին օլիմպիական դրոշի ներքո, որոշ հավաքականներ էլ օգտագործեցին իրենց օլիմպիական կոմիտեների դրոշները: Խաղերի ավարտին, ավանդույթի համաձայն, պետք է բարձրացվեր հաջորդ օլիմպիական ընդունող երկրի դրոշը. Մոսկվայում ԱՄՆ դրոշի փոխարեն բարձրացվեց Լոս Անջելես քաղաքի դրոշը:

1984թ., ԱՄՆ, Լոս Անջելես: ԽՍՀՄ-ն ու սոցիալիստական բլոկի եւս 13 պետություն (նրանց թվում նաեւ Եթովպիան, Անգոլան եւ Վիետնամը) հրաժարվեցին մասնակցել Լոս Անջելեսի ամառային օլիմպիական խաղերին: Դրա շարժառիթը եղավ ԽՍՀՄ պաշտոնական հայտարարությունը՝ կապված իր մարզիկների կյանքի համար մտավախության եւ ԱՄՆ-ում հակախորհրդային հիսթերիայի հետ: Սոցիալիստական Ռումինիան միացավ բոյկոտին, բայց թույլատրեց իր մարզիկներին մեկնել ԱՄՆ: Լիբիան եւ Իրանը նույնպես հրաժարվեցին օլիմպիադային մասնակցությունից. պատճառն ԱՄՆ-ի հետ խիստ լարված հարաբերություններն էին: 1984թ. թայվանյան թիմը վերադարձավ օլիմպիադա՝ հանդես գալով «Չինական Թայվան» անվան տակ:

Մասնակից երկրների թվով Լոս Անջելեսն անցավ Մոսկվայից (140-ը 81-ի դեմ): Բացի այդ, օլիմպիադայում առաջին անգամ, 32-ամյա բացակայությունից հետո, հանդես եկավ Չինաստանի հավաքականը: Չարկ է ավելացնել, որ եւ 1980թ., եւ 1984թ. բոյկոտների կազմակերպիչները (համապատասխանաբար՝ ԱՄՆ-ը եւ ԽՍՀՄ-ը) չկայացած օլիմպիականների համար անցկացրին այլընտրանքային մարզական մրցումներ:

1988թ., Չարավ. Կորեա, Սեուլ: Խաղերին մասնակցելուց հրաժարվեց Չյուս. Կորեան, իսկ որպես նրա հետ համերաշխության նշան՝ նաեւ Նիկարագուան, Կուբան ու Եթովպիան: ԿԺԴ-ն բոյկոտի դիմեց՝ քանզի իրեն չէին տվել օլիմպիական մրցումների մի մասն անցկացնելու իրավունք:

1992թ., Իսպանիա, Բարսելոն: ԽՍՀՄ փլուզումից հետո խաղերին մասնակցեց Միացյալ թիմը, որի կազմում էին մարզիկներ նախկին խորհրդային 12 հանրապետություններից: Միացյալ թիմը, որը հավաքեց բոլորից շատ մեդալներ, հանդես եկավ օլիմպիական դրոշի ներքո (Էստոնիան, Լատվիան ու Լիտվան հանդես եկան առանձին՝ իրենց ազգային դրոշների ներքո): Չամանման ձեւով ներկայացավ Չարավսլա-

վիայի հավաքականը, որը ՄԱԿ-ի պատժամիջոցների պատճառով օլիմպիադային պաշտոնապես չէր մասնակցում:

2000թ., Ավստրալիա, Սիդնեյ: Բացման արարողությանը Հարավային եւ Հյուսիսային Կորեաների թիմերն անցան միասին՝ ընդհանուր դրոշի ներքո, որը հատուկ ստեղծվել էր այդ նպատակի համար (մրցումներին նրանք առանձին մասնակցեցին): Խաղերին չմասնակցեց Աֆղանստանը. այն ժամանակ կառավարող թալիբներն արգելել էին սպորտը, ուստի համապատասխան հրավերը երկիրը չէր ստացել:

2004թ., Հունաստան, Աթենք: Այս խաղերը եւս նշանավորվեցին քաղաքական սկանդալով: Իրանի կառավարությունն իր մարզիկներին արգելեց մասնակցել քառորդ եզրափակիչ, կիսաեզրափակիչ ու եզրափակիչ խաղերին, որտեղ իրենց մրցակիցները կարող էին լինել Իսրայելի մարզիկները (այս երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ չկան): Արդյունքում՝ իրանցի ձյուդոիստը, որը հաղթահարել էր մրցաշարի խմբային փուլը, հրաժարվեց պայքարը շարունակելուց: Նա շատ տիտղոսակիր մարզիկ էր, երկու անգամ հաղթել էր աշխարհի առաջնությունում եւ բացման արարողությանն իրանական թիմի դրոշակակիրն էր: Ձյուդոիստը հայտարարեց, թե այդ քայլն անում է ի նշան Պաղեստինի ժողովրդի հետ համերաշխության: Իրանում նրան հանձնվեց դրամական պարգև, որը տրվում է օլիմպիական «ոսկի» նվաճած մարզիկներին:

Washington ProFile

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Հարությունյան «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ» ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ	1
Սուրեն Մովսիսյան ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ	6
Ռուբեն Սաֆրաստյան ԹՈՒՐԹԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԴԵՄ	12
Ռուբեն Մելքոնյան ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	17
Սարգիս Հարությունյան ԱՄԵՐԻԿԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ	22
Ալեքսեյ Տերեշչենկո POST-KOSOVO. ՀԱՐԱԿԱՅԻՆ ԵՎՐՈՊԱ	28
ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ. ՍՊՈՐՏ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	37

*Շապիկին պատկերված է տեսարան **Տայթից**.
հեռվում՝ **Տայոց քար լեռը***

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: